



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՅԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՐԱՔ ՀՐԱՄԱՆ Հ 2

Ա. ՄԻՑՐՈՒԹՆԱԸՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԳՅՈՒՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՀՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱռՈՒՄ

Թարգ. Գ. Ա. Ա. Ա.

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈԹ»-Ի

1929 թ.

ՏԵՐԵՎԱՆ



Ա. ՄԻՏՐՈԳԻԱՆԻ



ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԳՅՈՒՂՎԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵԽՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՎԱՐՈՒՄ

Թարգ. Գ. Ա. Ա. Ա.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂԵՐՈՂ»-Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԵՐ № 3991
ԳՐԱՆԵՐՊԴԼԵՎԱՐ 2201 բ.
ՏԻՐԱԺ 2000

ԱԹԱԶԱԲՈՅՆ

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը՝ կոլեկտիվացման գծով՝ մեզանում որեց-ոք ծավալվում ու նորանոր նվաճումներ ե ձեռք բերում։

Կուսակցության XV համագումարից հետո մեր քոլոր պետական, կուսակցական և հասարակական կազմակերպություններն իրենց ուժերը մոքայի յեն յենք-արկել՝ նպաստելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին։ Շնորհիվ դրա, գյուղացիության կոլեկտիվացման շարժումը գնալով հսկայական չափեր ե ընդունել և գյուղատնտեսության այդ սեկտորը սկսել ե նշանակալից դիրքեր գրավել գյուղում։

Գյուղատնտեսության կոլետիվացմամբ մեզ վիճակված ե գյուղի տնտեսական, կենցաղային կյանքում հիմնական հեղափոխությունն կատարել. հիմնովին ֆանդելով տնտեսության վարման, մարդկանց փոխհարաբերությունների և կենցաղային հին ու հետամնաց ձեերը։ Այդ հսկայական դժվարին ու կարևոր աշխատանքն առանց կուսակցության ակտիվ դեկավարության ու մասնակցության անհնարին և հաղթանակորեն վերջացնել։ Ավելին, կուսակցությունն այժմ իր հիմնական անելիքը գյուղում համարում ե գյուղատնտեսության կոլեկտիվացումը։

Դա կարևոր ե, մասնավանդ, գյուղի գասակարգային պայքարի սրման պայմաններում, յերբ կուլակ տարրն աշխատանքով՝ իր քոլոր գեներեն ու միջոցները մոքայի յենք-արկել, կոլեկտիվ տնտեսությունների դեմ որեսական պայքարի դիմելով։

Նման պայմաններում գյուղի կոլեկտիվացման գործը և կուլակի դեմ կազմակերպված պաքյարք դեկավարելու ամրությանը, առաջին հերթին ընկնում է գյուղի կուսակցական կազմակերպությունների վրա: Գյուղի կոմունիստը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ֆրոնտում պիտի լինի առաջին դիրքերում ու ավանգարդի դերում: Գյուղի կոմունիստը կոլետիվացման կողմնակից պիտի լինի վոչք քեխուզ, նառով այլ գործով:

Այժմ, մեր յերկրում սոցիալիստական շինարարության ծավալման պայմաններում այն կոմունիստը, վորքի այդ մեծ աշխատանքներին ակտիվ գործնական մասնակցություն չի ցույց տալիս, նա կոմունիստ չի: Կոլեկտիվացման ոգտին գյուղի կոմունիստի խոսքերն արժեքից բալորովին զուրկ կլինեն, յեթե նա գործնականում չի մասնակցում այդ աշխատանքներին: Մեր ագիտացիան գյուղում ընդհանրապես և կոլեկտիվացման ոգտին մասնավորապես՝ պիտի լինի գործնական ու կենտանի որինակով: Դործնական պիտի լինի նաև կուսակցական կազմակերպությունների դեկավարությունը կոլտնտեսությունների աշխատանքների առաջրգում: Կուսակցական աշխատողը գյուղում չպիտի սահմանափակվի միայն կոլեկտիվացման ու դրա աշխատանքների մասին ընդհանուր նառ կամ գեկուցում կարդալով.—նա պարտավոր է տեղում առաջացող բազմաթիվ գործնական հարցերին նիշտ պատասխաններ տալ:

Կուսակցական աշխատողը պիտի լինի նաև կոլտնտեսության աշխատանքների խմացող կազմակերպիչը: Դրա համար մեր գյուղի, շրջանի, անգամ գավառի աշխատողները և առաջին հերթին կուսակցական գծով գործողները պետք են լավ տեղյակ լինեն կոլեկտիվ տընտեսությունների կազմակերպչական ձևերին, աշխատանքների մերքին կանոններին, կանոնադրությանը և այլն:

Դրա համար անհրաժեշտ է, վոր մեր ընկերները ՍՈՎՀՈՐԵՆ ԳՅՈՒՂԾ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՐԵՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼ:

Այս հաճախաբները մի կողմից, իսկ մյուս կողմից, կոյտնաշարժման մասայական դառնալը, մեր առաջ անհետաձգելի պահանջ են դրել հրատարակել կոլեկտիվ տնտեսությունների գաղափարն ու գործնականն ուսուցանող մասայական գրականություն։ Նման գրականության կարիքը մեծ է մասնավորապես Հայատանում, որ մինչև այժմ հրատարակվել ե ընդամենը մի քանի բրոշյուր։ Մեզ անհրաժեշտ է համապատասխան ինֆորմացիա ու բարգմանչական գրականությամբ մեր գյուղը վողողել։

Ընկ. Միտրոֆանովի բրոշյուրի հայերեն հրատարակումը համարյա առաջին քայլն է այդ ուղղությամբ։ Այս բրոշյուրը կոլխոզարժման նվիրված մասայական գրականության մեջ լավերից մեկն է համարվում և արդեն ուսերեն լեզվով լույս է տեսել 4-րդ հրատարակությունը։

Բրոշյուրում բազմակողմանի լուսաբանված են կուսակցության համագումարների ու բարձրագույն որգանների կողմից գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առթիվ ընդունված վորաշումները։ Բացի այդ, հեղինակին հաջողվել է ցույց տալ գյուղական կոմունիտի դերն ու անելիքները կոլեկտիվացման ասպարիգում։

Մեզանում մի շարք շրջանային և անգամ գավառային կուսակցական կազմակերպությունները կարծում են, վոր **XV** համագումարից հետո կոլեկտիվացման ռդուին կարճառև ազիտացիոն կամպանիա մղելով՝ իրենց անելիքը վերջացրել են։ Ավելին, մի շարք շրջագմակերպություններ համարյա դադարել են այդ ուղղությամբ գործելուց։ Շնորհիվ դրա, վորոշ շրջան-

ներում նկատելի յե կոլեկտիվացման մասսայական քա-
փի բուլացում:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումն այժմ
մեզանից պահանջում ե տև ական, անդադար լարված
աշխատանիք: Այդ ուղղությամբ ամեն մի դանդաղում,
աշխատանիքների դադարում կարող ե բուլացնել սոցիա-
լիզմի կառուցման ֆրոնտը և ուժեղացնել մեր հակառա-
կորդի հարձակման հնարավորությունները:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման պայքա-
րը պիտի ավելի ծավալված ու կրկնակի ուժեղացված
քափով առաջ տանել:

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

1. ԻՆՉ Ե ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԿՈՄՊՈՒՆԻՍՏԵՐԻՆ ԿՈԼՏՆՏԵԱՐԺԱՆ ՄԱՍԻՆ

Համկամկուսի գյուղական կազմակերպություններին
և առանձին կոմունիստներին, նախ և առաջ անհրաժեշտ
է, թեկուզ համառոտակի ծանոթանալ կոլտնտեսությունների շարժման պատմության, վորովհետեւ այդ
պատմության հետ ծանոթ լինելը կողմի կոմունիստներին խուսափել անցյալում կատարված սխալներից,
և ողտագործել կոլտնտեսության տասնամյա
պրակտիկայի հարուստ փորձը։ Գյուղական բջիջների
կողմից կոլտնտեսությունների նկատմամբ իրենց խընդիրների չհասկանալը հաճախ առիթ ե տալիս միանգամայն անմիտ արդյունքների, ինչպես որինակ, գյուղական բջիջներից մեկի հետեւյալ վորոշումը, ուր տաված ե։

—Հանձնաբարել միլիցիայի աշխատակից ընկեր (այսինչն) հսկողություն սահմանել շրջանի կոլեկտիվ տնտեսությունների նկատմամբ և ղեկավարել նրանց։

Հարկավ, նման անմիտ յերեւոյթները շատ հազվադեպ են, սակայն մենք այս որինակը բերեցինք նրա համար, վորովհետեւ սա արդյունք ե կոլտնտեսությունների շարժման ու եռության և թե նրանց նկատմամբ կուսակցության ունեցած խնդիրներին միանգամայն անծանոթ լինելուն։

Այս գրքույկում մենք կաշխատենք նշել կոլտնտչարժման վերաբերյալ գյուղական կուս։ կազմակերպությունների գուտ գործնական խնդիրները իսկ ինչ վերաբերում ե այդ շարժման պատմությանը, դրա եռության և քաղաքական ու տնտեսական նշանակության, ապա այդ հարցերը, չնորհիվ գրքույկի ծավալի սահմա-

նափակ լինելուն, մենք հնարավորություն չունենք լուսաբաննել ամբողջապես, ուստի և կսահմանափակվենք միտյն մի քանի թեղիսներով:

Վորովեսպի խմանանք, թե ինչպես ազիտացիս անել դյուզացիական անտեսությունների կոլեկտիվացման Համար, ինչպես ովել կոլտնտեսություններին և զեկավարել դրանց, իհարկե, բավական չե կարգավ միտյն մեր առաջապրած թեղիսները: Աներաժեշտ ե կորուստեսաշարժման վերաբերյալ կուսակցության հիմնական իրահանգներն ու խորիրդային որենքները, ինչպես և այդ շարժման անցյալը ուշադիր կերպով ուսումնասիրել բցիջների ընդհանուր ժողովներում, խմբակներում և կուսակցություններում: Բացի գրանից, դյուզական խրձիթ-ընթերցարանները պետք ե ունենան կոլտնտշարժման վերաբերյալ անհրաժեշտ գրականություն, և առաջին հերթին՝ «Կոլեկտիվիտա» ժուրնալը*):

Միտյն մեկ տնօտմ քննություն առնել կոլտնտշինարարության հարցը՝ վորովես չքավորության ողնելու ավելի գործնական միջոց, — դա շատ քիչ է: Հարկավոր և մշտական և ուշագրաւթյամբ հետեւել այդ շինուարության աճման ու զարգացման, ինչպես և այդ տաթիվ Կոմկուսակցության ու պետության կողմից որպող նորանոր հրահանդներին:

Ներկա գրքույիլի վերջում տպագրված և կոլտնտշինարարության հարցի տեսական ուսումնասիրման համար վորովես ձեռնարկ անհրաժեշտ գրականության ցուցակը: Ինչ վերաբերում և ստորև բերված թեղիսներին, տպա մենք ԽՍՀՄ կոտավարության 1927 թ. մարտի 16-ի վորոշման հետ միասին՝ վորովես ծրագիր առաջարկում ենք հետեւյալ թեղիսները: —

1. Հեղափոխությունից առաջ, կապիտալիստական պայմաններում հողագործական կոլեկտիվ տնտեսու-

*) «Կոլեկտիվիտա» ժուրնալի խմբագրության և գրասենյակի հասցեն.—Մոսկվա, գու. Դմիտրովկա № 4

թյուններ կազմակերպելու փորձերը անխռուսավելիորեն մատնագում եյին անհաջողության, վորովհետեւ այդ փորձերի գեմ ուղղված եր կապիտալիստական տնտեսության ամբողջ սիստեմը և կապիտալիստական պետական տպարտակի ամբողջ մեխանիկան:

2. Փողովրդական տնտեսության, խոշոր արդյունաբերության և արանապորտի հիմնական մասերի համայնացումը, վարկերի պետական կազմակերպումը, արտաքին տուետրի պետական մանուպոլիան ու ներքին տուետրին ուղղված հոկողությունը և, վոր գլխավորին և, հոգի ազգայնացումը հնարավոր դարձրին հողագործական կոյեկտիվ տնտեսությունների շինարարությունը և տարածովեցին այդ շինարարության քանակական աճումն ու վորակի բարելավումը՝ Խորհրդային իշխանության պայմաններում:

3. Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիներում կոլտառեսությունները բառակաների և չքավորների այլ հեղափոխական կազմակերպությունների շարքում հանդիսանում եյին Համելոմկուսի և Խորհրդային իշխանության կազմակերպչական, քաղաքական հենարանը և նրանց մարտական մարմինները՝ թե կարգածաւերերին վերացնելու համար և թե կուլտակային հակոհեղափոխական ապատամբությունների, ինչպս և Դենիկինինի և Կոլչակի զորաբանակների գեմ տարվող պայքարում:

4. Ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության պայմաններին անցնելուն զուգորդեց կոլտառչարժման ամենալուրջ կրիզիսը։ Այդ կրիզիսն արտահայտվեց՝ կոլտառչասությունների քանակի կրծատումով, աշխատանքի կազմակերպման և դրա արդյունքների բաշխման նոր ձեռքի վորոնումով, ինչպես և կազմակերպչական միավորման սիստեմի ու կոլտառչասությունների շարժման ղեկավարության քայլայումով։

նավակ լինելուն, մենք հնարավորություն չունենք լուսաբանել ամբողջապես, ուստի և կոսհմանափակվենք միայն մի քանի թեղիսներով:

Վորպեսպի խմանաք, թե ինչպես ազիտացիս անել գյուղացիական անունությունների կոլեկտիվացման համար, ինչպես ողնել կորանահություններին և զեկափարիլ դրանց, իշարկե, բավական չե կարգալ միայն մեր առաջապրած թեղիսները: Աներածեցու և կուտնեսչարձման վերաբերյալ կուսակցության հիմնական երահանգներն ու խորհրդային որենքները, ինչպես և այդ շարժման անցյալը ուշադիր կերպով ուսումնաափիր բջիջների բջիջների բնդիանուր ժողովներում, խմբակներում և կուսդպրոցներում: Բացի գրանից, գյուղական խրճիթ-բնիթերցարանները պետք եւ ունենան կոլտնաշարժմոն վերաբերյալ անհրաժեշտ գրականություն, և առաջին հերթին՝ «Կոլեկտիվիստ» ժուրնալը*):

Միոյն մեկ անդամ քննության առնել կոլտնաշինարարության հարցը՝ վորպես չքավորության ողնելու ավելի զործնական միջոց, — դա շատ քիչ է: Հարկավոր և մշտական և ուշագրությունը հետեւ այդ շինուարության աճման ու զարգացման, ինչպես և այդ առթիվ կոմկուսակցության ու պետության կողմից որված նորանոր հրահանգներին:

Ներկա զբանալի վերջում տպագրված և կոլտնաշինարարության հարցի տեսական ուսումնասիրման համար վորպես ձեռնարկ անհրաժեշտ գրականության ցուցակը: Ինչ վերաբերում և սարեւ բերլած թեղիսներին, ապա մենք ԽՍՀՄ կոուավարության 1927 թ. մարտի 16-ի վորոշման հետ միասին՝ վորպես ծրագիր առաջարկում ենք հետեւյալ թեղիսները. —

1. Հեղափոխությունից առաջ, կապիտալիստական պայմաններում հողագործական կոլեկտիվ տնտեսու-

*) «Կոլեկտիվիստ» ժուրնալի խմբագրության և գրասենյակի հասցեն.—Մոսկվա, պե. Դմիտրովկա № 4

ները մանր ու միայնակ տնտեսությունների համար իրենց բարձր արժեքով անմատչելի լինելով և իրենց ոգտավետության պատճառով հարկազգում են նման տընտեսություններին միավորվել՝ հիշված մեքենաները միասնորեն ողտագործելու համար։ Հոդագուրկէ չքավորները համախմբվելով տրակտորի շարջը, աղաւիում են կուլակի վաշխառուական «ծառայությունից»։

8. Ներկա պայմաններում չքավորամիջակային մասսաների համար ավելի մատչելի և հասկանալի կուլեկտիվացման ձևերը հանդիսանում են այնպիսի պարզ արտադրական միությունները, ինչպսիք են հողը համայնորեն ողտագործող ընկերությունները և մեքենաոգտագործական ընկերությունները։ Միջակ-չքավորական լայն մասսաներին ներդրավիելով այդ պարզ միությունների մեջ, անհրաժեշտ և հիշել, վոր կոլեկտիվացման ավելի բարդ ձևերն ավելի լրիվ կերպով են պաշտպանում իրենց անդամների շահերը և տնտեսավես ավելի մեծ ոգուտ են տալիս։ Այդ պատճառով, անհրաժեշտ և ամեն կերպ աջակցել կոլանտեսության անդամների ինքնագործունեության և իրենց կամքով պարզ ձևերից անցնելու ավելի բարդ ձևերին, այսինքն՝ արտելների և կոմունաների։

9. Կոլանտչարժման վերոհիշյալ նվաճումներին զուգընթաց, գրա ներկա դրության մեջ զոյություն ունեն մի շարք թերություններ, վորոնք կայանում են հետեւյալում։—ա. Վորոշ քանակությամբ կեղծ-կոլանտեսությունների զոյությունը, այնպիսիների, վորոնք կազմակերպվում են կուլակների կողմից, նպատակ ունենալով կոլանտեսություններին արված արտոնություններն ու առավելությունները ողտագործելու անձնական շահերի համար կամ կոլեկտիվ ձևի տակտագցնելու կոլտնտեսության անդամների և շրջակա անկազմակերպ բնակչության կազիտալիստական շահողործումը, բ. Վորոշ քանակությամբ կոլեկտիվ տնտե-

սությունները շրջակա բնակչությունից կտրված և փակված լինելը, վորի հետ միասին բավականին քանակությամբ կոլեկտիվ անտեսություններ զյուղկոոպերացիայի ընդհանուր ցանցից դուրս դառնվելը, Դ. կոլտնտեսությունների կտղմի հոսունությունը, կոլտնտեսությունների անդամների հաստրակական սրածավաքյունը (անգործունեաություն) և գրանց աշխատանքի արտադրողականության անբավարարությունը, վարի առաջանում և այդ աշխատանքում նրանց ունեցած անձնական շահի բացակայության և իամ աշխատանքի վատ կազմակերպման հետեանքով։

10. Կոլեկտիվ անտեսությունների սոցիալիստական նշանակությունը վարուժում և վոչ միայն նրանով, վոր գրանք կազմակերպման սոցիալիստական ձեւեր ունեն (անտեսության խոշոր չափում, համեմատած մանր անհատական անտեսություններին՝ դրանց մեծ բերքատվությունը և այլն), այլև և դիմավարապես, իրենց ազգեցությամբ՝ շրջանի գյուղացիական անհատական անտեսությունների վրա։ Կոլտնտեսությունների այդ զբական ազգեցությունը գյուղացիության վրա պետք է կենսագործ լին՝ ա. անտեսությունը բերքատու, լույն ձեռնույն վարելու որինակով, բ. նյութական ազգուկուլուտուր ոգնություն հասցնելու և գ. ցուցմունքներով ու խորհուրդներով ոգնելու միջոցով։ Կոլտնտեսությունների այդ ազգեցությունը գյուղացիության վրա, պետք է նպատակ ունենա բարձրացնելու ամրող գյուղատնտեսության արտագրողականությունը, վորպես սոցիալիստական շինարարության նախադրյալներից և գյուղացիության վատահությունը անտեսության կոլեկտիվ ձեւերի նկատմամբ ուժեղացնելու կարեորագույն պայմաններից մեկը։

11. Կոլեկտիվ անտեսությունները հանդիսանում են վոչ միայն գյուղացիական անտեսությունների անմիջական կոլեկտիվացման ավելի զարգացած ձեւը, այլև և

դրա հետ միասին՝ կոռպերատիվ շինարարության ավելի զժվարին և բարդ ձեր: Լենինյան կոռպերատիվ պլանը, այսինքն՝ միայնակ չքափոր և միջակ տնտեսությունների արտադրողականության բարձրացման և գրանց կոռպերացման ուղղված բոլոր ձեռնարկումները, վերջին հաշվով կոլեկտիվացման ծրագիրն ե: Այդ պատճառով կոլեկտիվ չարժումը չպետք է կազմակերպչորեն անջատվի դյուզատնտեսական կոռպերացիայի ամբողջ սիստեմից, վորը գյուղատնտեսության կոլեկտիվացումն իրականացնում է տատիճանաբար, գյուղացիական տնտեսությունների մթերքների վաճառուհանումը և արտադրական մատակարարումը կոռպերացնելու միջոցով:

12. Կուսակցական և խորհրդային բոլոր մարմիններին, կազմակերպություններին և առանձին կոմունիստական անհրաժեշտ և ընդմիշտ հիշել, վոր կոլեկտիվ տնտեսությունները միանգամայն կամավոր ու մասնավոր իրավունքով (վոչ պետական) կազմակերպություններ են, ուստի և նրանց հրամայելը, նրանց ներքին կյանքին կոպիտ վարչական միջամտություն ունենալը և ընդհանրապես վարչական ձևում գործադրելը միանգամայն անթույլատրելի յե և պետք է պատճի կուսակցական ու խորհրդային կարգով:

Դրա հետ միասին, բոլոր կուսակցական, պետական, արհեստակցական և կոռպերատիվ կազմակերպություններին անհրաժեշտ և, ավելի մեծ համարձակությամբ և կայունությամբ ոգնել կոլեկտիվացման գործին և գյուղացիական մասսաների առաջ պարզել մանը չքափոր տնտեսությունների վնասակարությունը և կոլեկտիվացման անխուսեփելիությունը, վորպես անկուլտուրականությունից և չքափորությունից գյուղի գուրք գալու միակ յելքը:

1928 թ. ընթացքում խորհրդային մարմինները, կուսակցական, կոռպերատիվ և հասարակական կազմա-

կերպությունները, առաջնորդվելով Համկոմկուսի ԽV
համագումարի հրահանգներով և հենվելով տասնյակ
միլիոնների հասնող պետական խոշոր տնտեսական
աջակցության վրա, կատարեցին դյուզի կուեկտիվաց-
ման մասսայական լայնարձակ աշխատանքների փորձը:
Այդ աշխատանքների նախնական արդյունքները նոր
ձևով են առաջարկում կուտաշարժման քանակի և վո-
րակի հիմնական հարցերը:

Այդ արդյունքներից կարեորագույնը հանդիսա-
նում է կուտաշարժման անդադար բանակական աճումն: 1927 թ. հոկտեմբերի մեկից մինչև 1928 թ. հուլիսի 1-ը
Խ.Ս.Հ. Միությունում կոլտնտեսությունների ընդհա-
նուր թիվն աճել է 98,9 %, այսինքն՝ 18508-ից մինչև
35897 միավոր: Այդ նույն ժամանակամիջոցում մեջե-
նազարդագործական և մելիորատիվ ընկերությունների
թիվն աճել է 52,20%-ով:

Կուեկտիվ տնտեսությունների 1928 թ. ուժգին ա-
ճումն վկայում է ԽV կուտամագումարի հրահանգների
միշտ և ժամանակին լինելու մասին, անվիճելի և կարուկ
պատասխան և տալիս աջ ուկլունիստաներին, վորոնք զը-
լուի են ցավեցնում, վորպեսզի վորեև կերպ նվազեց-
նեն կորանտեսությունների պատմական դերը՝ դյու-
զատնտեսության վերակառուցման դործում, հենվելով
իրք թե կուեկտիվ տնտեսությունների դեմ դյուզացիու-
թյան ունեցած անհաղթելի կանխակալ կարծիքի վրա:

Կոլտնտեսությունների 1928 ուժգին աճումը փայ-
լուն կերպով ապացուցեց այդ հարցում լինինյան տե-
սակետի ճշտությունը, այն իմաստով, վոր կոլտնտե-
սություններից ստացվող ակնահայտ տնտեսական շահը
վերացնում է չքավոր և միջակ դյուզացիության մանր-
ուեկանատիրական նախալաշարումները: Նախորդ-
տարիններում ավելի շատ կոլտնտեսություններ տա-
րածված շրջաններում հենց նկատվում է, վոր 1928

թ. այդ շրջաններում ավելի շատ են աճել կոլտնտեսությունները:

Կոլտնտչարժման փորձը վկայում է այն մասին, վորմանք-սեփականատիբական նախապաշարումներից կարտ են հրաժարվել վոչ միայն միջակ և չքավոր գյուղացիների ավելի զիտակից ներկայացուցիչները, այլև ամբող գյուղերը: Կարելի յե տասնյակ որինակներ բերել, յի ըր 1928 թ. վերջում միայն Ռ.Ս.Ֆ.Խ.Հ.՝ կոլեկտիվացման ելին յենթարկվում հարյուրավոր տներ՝ հազարավոր հեկտար հողերով:

Մասսայական կոլեկտիվացման այդ գործում հսկայական նշանակություն ունեն տրակտորները և կոնտրակտացիան: Ամբողջ գյուղերի կոլեկտիվացումը, անկառակածորեն չի կարող տեղի ունենալ տառնց գյուղի շահագործող վերնախավի դիմադրության. սակայն այդ դիմադրությունը ձնշվում է միջակների և չքավորների գիտակցությամբ ու կազմակերպվածությամբ: Հողաշինարարության և կոլեկտիվացման հարցերի շուրջը գյուղում ծագած դասակարգային պայքարն այնպիսի լայն, առւր և լարված կերպարանն ե ընդունում, ինչպես սրանից տասը տարի առաջ, ուազմական կոմունիդմի շրջանում:

Մակայն ներկայիս պայքարը նախորդ պայքարներից տարբերվում է այլ ձևերով, ստեղծագործական բնույթով և մեծ համառությամբ: Այս անգամ պայքարը տարվում է վոչ միայն չքավորության աղատագրելու կուրակների շահագործումից, այլև գյուղատնտեսության կոլեկտիվացման և տեխնիկական ուսուցիչներու նրա արտադրողական ուժերը:

1928 թ. կոլտնտեսությունների շարժման ժամանակական անման հետ միասին նկատվում է նաև դրա վորակական հաջողությունը, այն ե՝ կառուցված և ամրապնդված շարժման կազմակերպչական սխտեմը, —

սկսած կոլտնտեսությունների միություններից մինչև, այսպես ասած խմբակային միությունները, տեղի յէ ունենում մանր կոլտնտեսությունների խոչորացում՝ դրանց միաձուլելու կամ նորանոր անդամեր ընդունելու միջոցով։ Նկատվում է նաև, վոր կոլտնտեսությունները զգալիորեն առաջ են շարժվում ցածր ձեւերից դեպի բարձր ձևեր։

Միաժամանակ նկատելի յէ, վոր աստիճանաբար աճում է կոլտնտեսությունների թիրքատվությունը, խորանում է դրանց անտեսությունների աեխնիկան ու տրնտեսական ռացիոնալացումը և աժեղանումը կոլտնտեսությունների ազգեցությունը շրջանի բնակչության նկատմամբ։

Հիշված նվաճումներին զուգընթաց, կոլտնտեսությունների 1928 թ. մասսայական շինարարությունն ունի նաև իր չափազանց կարեւոր թերությունները։

Կենտրոնական Վիճակագրական Վարչության կողմից 1928 թ. կոլեկտիվ անտեսությունների նկատմամբ կատարված վիճակագրական հետազոտման նախնական այլշահները վկայում են, վոր 1928 թ. կազմակերպված կոլեկտիվ անտեսություններն իրենց ծավալով ավելի մանր են, քան նախորդ տարիներում կազմակերպվածները։ Այս հանդամանքը մասսամբ բացարձում է նրանք, վոր նոր կոլտնտեսությունների մեջ ավելի մեծ քանակությամբ չքավորներ են մտել, քան մինչև 1928 թ. կազմակերպվածները։ Այդ պատճառով, ավելք ե կոլտնտեսությունների խոչորացման խնդիրն իրադործել ավելի մեծ համառությամբ, քան մինչև որս, սակայն առանց վարչական ճնշումների և հրամանների։

1928 թ. փորձից հետո, վորը դրական արդյունքներ տվեց, —ամբողջ գյուղեր կոլեկտիվացման յենթարկելու հարցը դառնում է կոլտնտշինարարության հիմնական և կարեւորագույն խնդիրը, վորովհետեւ ամբողջ գյուղերի անցումը տնտեսության կոլեկտիվ ձևերին, ապա-

Հովում ե ավելի արագ և դրա հետ միասին, ավելի դրա կանոքն լուծելու ամրողջ դյուզացիական տնտեսության բերքատվությունը 30-35% բարձրացնելու հարցը:

Կոլտնտեսությունների քանակական ուժին աճման, ի հարկի, չեյին կարող չուղեկցել նաև վորոշ հիվանդագին յերեռությունները և թերությունները, վորոնցով միշտ ել տառապել և կոլտնտչարժումը:

Այսուղից ել բղխում ե այն, վոր համապատասխան մարմինները, կոոպերատիվ կազմակերպությունները, և վոր դլխավորն ե, կոլտնտչարժման կազմակերպչական սիստեմն ու չամ. Կոմիտսի դյուզական կազմակերպությունները պետք ե տառապատկեն իրենց ուժերը՝ պայքարելու այդ հիվանդությունների և թերությունների դեմ:

Համկոմիտսի կենտկոմի նոյեմբերյան (1928 թ.) Պլենումը դատավ, վոր «չնայած կուրոնտեսությունների և խորհրդային տնտեսությունների շինարարության առաջին հաջողություններին, այդ բնագավառում ձեռք բերված նվաճումները միանդամայն անբավարար են»: Այդ պատճառով Պլենումը հրահանդեց «ձգտել կոլտնտեսությունների քանական և վորակական հետազաանման»:

Անհրաժեշտ ե ձգտել դրանց քանակային աճման, այլ վոչ միայն յեղած կոլտնտեսությունների վորակական բարելավման: Միայն կոլտնտեսությունների վորակի լավացման հետեւ ընկնելով, հաճախ թագցվում, և մեր անտարբեր և բացասական վերաբերմունքը՝ դրանց նկատմամբ վորպես չքավորության ոգնելու ավելի գործնական միջոց:

Պետք ե հիշել, վոր կոլտնտեսությունների մեծ քանակությունը սոցիալիստական բնույթ և տալիս ամրող կոլտնտչարժման:

ՀՆՉՊԵՍ ԱԳԻՏԱՑԻԱ. ՄՊԵԼ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՑԵՎ ՈԳՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

Ինչպես ունեսր, նույնպես և չքավոր գյուղացիները իրենց մանր-բուրժուական իզերողիքն, այսինքն արնտեսա-հասարակական հասկացողությունը շատ աեղին արտահայտում են դանազան առակներով:

Այդ առակների խմանում է նրանում, վորմանը սեփականատերը զերազառում է ապրել կիսաքաղց և մինչեւ անդամ քաղցած մնալ, միայն թե ունենալ իր անհատական անտեսությունը:

Հակայն ինչպես պատահեց, վոր 1927 թ. վերջում հարյուր հազարավոր գյուղացիներ կազմակերպեցին կոչելիքից տնտեսություններում, այսինքն, հակառակ զնուցին դարերի պատճենական առակին: Այս հարցին կորելի յև հաճախակի մոռավորապես հետեւալ պատասխաններ:

—Ժողովարդը հեղափոխության բնթացքում ավելի գիտակից դառավվ, —հասկացավ կոլտնտեսությունների սպուտը:

Մի քանիսն ել այդ պատասխանին տվելացնում են՝ իզուր չե, վոր կոմունիստաները և խորհրդային իշխանությունը սասար տարի շարանակ ազիտացիա յին տանում հոգուտ կոլտնտեսությունների:

Այս պատասխաններ ձիշտ կլինի, յեթե դա մոռավորապես ձեռակերպենք այսպես.

—Չքավոր և միջակ գյուղացիությունը վորոշ տընտեսական հանգամանքների ննշման տակ գիտակցեց տընտեսությունը կոլեկտիվորեն վարելու սպուտը, իսկ կոմկուսակցությունը և խորհրդային իշխանությունն իրենց ազիտացիայով և դործնական ոգնությամբ ամբապընդում են այդ գիտակցությունը և ոժանդակում կոլտնտեսությունների շարժման աճման:

Կոլտնաւչարժման մասին կենտգործկոմի և Ժողկոմ-խորհի 1927թ. մարտի 16-ի վորոշումն այսպես է բնու-րոշում այն տնտեսական հանգամանքները, վորոնք չքա-վորներին և միջակերին մղում են .դեպի կոլտնաեսու-թյունները.—

«Գյուղացիության գիֆերենցիացիայի (գասակար-դային շերտավորման) աճումը, արդյունաբերության կողմից գյուղի տվելորդ ազգաբնակչությանը կյանելու հնարավորություն չլինելը, գյուղում մեծ քանակության աեկավազոր գյուղացիության դոյլությունը, վո-րոնք հնարավորություն չունեն անհատական (միայնակ) կերպով բարձրացնել իրենց տնտեսությունը, գյուղացիության այդ խավերի ձղառումն՝ իրենց տնտեսությունը յավացնելու և ազատագրվելու կուլակի շահագոր-ծումից,—ահա այս բոլորը սակավազոր գյուղացիության ավելի սկսիվ (գործառու) խավերին (առանձնա-պես՝ գյուղական չքավորության) մղում են դեպի ի-րենց տնտեսությունը կոլեկտիվացման յենթարկելու-ուղին»:

Դրա հետ միասին, մեքենայացման զարգացումը, և մտանավորապես հողագործության տքակառիզա-ցիան, նկատի ունենալով, վոր հնարավոր չե ոնհատա-կան ձեռվ ռացիոնալ (շահավետ և խելացի) կերպով սղ-տագործել բարդ և թանգարժեք գյուղատնտեսական մեքենաները,—սրանք ահա ստեղծում են կոլեկտիվ հո-ղագործության զարգացման նոր կարեռագույն աղբյուրներ։ Աջակցելով գյուղացիական ավելի լայն խա-վերին՝ ներդրավելու կոլտնաւչարժման, դլխավորա-պես պարզ ձեւի մեքենագործական ընկերություն-ների և հողը համայնողեն ոգտագործող ընկերություն-ների մեջ, գյուղատնտեսության մեքենայացումը, դրա հետ միասին տեխնիկական հիմք և ստեղծում կոլտնաւչի-նարարության համար»։

Հարց և ծովում, ոլե՞տք և արդյոք կոլտնաւ-

թյունների կազմակերպման համար ագիտացիա մղել գյուղացիության մեջ, յերբ հիշված տնտեսական հանդամանքներն առանց վորեւ ագիտացիայի գյուղացիության մղում են դեպի կողանտեսություններ։ Հարկավայրէ տնտեսական հանդամանքները վճռողական նշանակություն ունեն, սակայն, անհրաժեշտ են նաև ագիտացիան, բայց խելացի ագիտացիա, դիմավորապես՝ դործով և որինակներով, վոչ թե գատարի խոսքեր առելով, ընդհանրապես կոլեկտիվացման ողտավետության մասին։

Կոմկուսի ԽՎ համագումարում ընկ. Մոլոտովը՝ կուսակցության աշխատանքները գյուղում խնդիրների մասին իր, զեկուցման մեջ հաղորդեց, վոր Հոգֆողկոմատի տեղեկությունների համաձայն, ութ միլիոն չքավոր և սակավազոր միջակ տնտեսություններ, չնորհիշերենց մանրության միանդամայն անյել դրության մեջ են գտնվում։ Այդ տնտեսություններում իրենց ծախսքերը չեն արգարացնում անգում ձիները և հասարակ դութանների գնումը, վորովհետև այդ ամենահասարակ ինվենտարի համար շատ քիչ աշխատանք կա տրդ փոքր տնտեսության մեջ, կամ ինչպես ասում են՝ բավարար բանիցորական բեռնավորում չկա։

Մանր տնտեսության մեջ՝ համեմատած խոչոր տընտեսության, —բերքատվությունն ել ցածր և, անտառունիներից ստացված յեկամուտն ել. մինչդեռ այստեղ ավելի մեծ չափով մարդկային աշխատանք ե կորչում իղուր, քան խոչոր տնտեսության մեջ։

Վերցնենք հինգ մանր տնտեսություններ գյուղում և գյուղատնտեսի ողնությամբ հաշվենք, թե վորքան ե վճարված յեղան և գութանին, տարեկան վորքան արժի յեզի պահպանման ծախքը, և ապա դրա կողքին դնենք այդ նույն տնտեսությունից ստացված տարեկան յեկամուտը, այդ յեկամուտից դուրս գալով յեղան ու գութանի աշխատանքին հասնող բաժինը, —համեմատենք

ինվենտարի գնման և պահպանման ծախքերին։ Դրանից հետո նույն այդ գործողությունը կատարենք արդեն ամբապնդված կոլտնտեսության վերաբերյալ։ Խոչոր և մանր տնտեսությունների վերաբերյալ կենդանի որինակներով կատարված ինվենտարի յեկամուտի այդ գործնական հաշվիններն ամենից լավ կհամոզեն լսողներին՝ անցնելու խոչոր տնտեսությունների։

Որինակի համար, Քանաքեռ կամ Դավալու գյուղի չքավորներին հարուստ գյուղացիներն «ոգնում» են ինվենտարով (գութանով կամ յեղով) և սերմով, այդ «ոգնության» համար չքավորն ընկնում ե իրեն «ոգնողի» շահագործման տակ՝ նրա համար զանազան ձրի աշխատանքներ կատարելով։ Հարեւան գյուղում չքավորները կազմակերպել են հողը համայնքեն մշակող ընկերություն կամ արտել, վորը ստացել է տրակտոր ու սերմանման վարկ, և այսպիսով արտելն «պարտք ե վերցրել» պետությունից՝ կոռպերատիվ միության միջոցով։ Յեթե կոլտնտեսության անդամներն իրենց մտքում դընեն՝ ինչ գնով ել ուղում ե լինի, պետք ե ազատվել կարիքից և կուլակի շահագործումից, —յերկու կամ յերեք տարի իրենց տնտեսություններն ընկերացին համայնտական ձեռով վարելուց հետո արդեն 15–18 փութ ավել ըերք կստանան մի հեկատը հողից։ Բերքի այդ բարձրացումով կարելի յե վճարել պետությունից կամ կոռպերացիայից վերցված փոխառության տոկոսները և այն գումարը, վորն անհրաժեշտ ե պարտքերն արտոնյալ կերպով վճարելու համար։ Միանգամայն պարզ է Քանաքեռի և Դավալու համար։ Միանգամայն պարզ է Քանաքեռի և Դավալուի շքավոր գյուղացիների համար, վոր նրանք յերբ սեփական աչքերով տեսան կոլտնտեսությունների գործնական ոգուտը, այլևս հարկավոր չե նրանց խոսքերով համոզել կոլտնտեսությունների ոգուտի մասին։ Տեսան, պրծավ գնաց։

Գյուղացիական տնտեսության կոլեկտիվացման այդպիսի մի ագիտացիայի մասին ընկ. Մտավինը հա-

դորդեց. Համկոմկուսի ԽՎ համագումարում տված դեկտուման մեջ: Նա կարգաց Ռւելախնայի մի շարք դյուզերի չքավորների նամակը: Այդ նամակում ասված եր, թե ինչպես մոտակա խորհրդային տնտեսությունն աղաւաց իրենց կուլակների շահագործումից, —արակառներով հերկելով նրանց վարելահողը և ցանելով բնափր սերմացու:

«Տրակառուրների այլ աշխատանքից հետո, —գրում են դյուզացիները, —մենք չենք ուզում այլևս չքավորական մանր տնտեսություններ ունենալ, այլ վորոշեցինք կազմակերպել Համայնացված արակառորային տնտեսություն, ուր առանձին մանր կառուներով ցանքեր չեն լինելու»:

Ստ 1927 թվին եր: 1929 թ. սկզբին ովեաւեան և կոսպերատիվ ձեռնարկաւթյանների կողմից կողմանեկերպմած են մի քանի տասնյակ արակառորային վարձակայտններ՝ ամբողջ դյուզերի հողերը մշակելու համար: Առաջիկա հինգ տարվա ընթացքում այլ տիտիսի արակառորային կայանների քանակն աճելու յի այնքան մեծ չափով, վոր դրանք կդառնան դյուզատանակառության կողեկանիցման ամենահամոզիչ ագիտատորները, նրա ամենազորեկ շարժիչներից մեկը:

Արգեն իսկ ներկայումս, ամեն տեղ, ուր արակառային վարձակայտնների մասին լուրեր են լովում, —սկսվում է յեռանդուն քննովել արակառորները դյուզ բերել տալու հարցը: Հասկանայի յե, վոր արակառորներ բերելուն կողմնակից են չքավորները, իսկ գեմ են կուլակները, վորոնք շահագործում են բանվոր անասուններ չունեցող չքավորներին: Կուլակները վախեցնում, սուսլուրեր են տարածում, վոր իրը թե հողի համայնական մշակումը վնասարեր է: Միջակները տատանվում են: Ոհա այստեղ է, վոր կուսակցական կազմակերպությունը պետք է վոչ թե միայն բանավոր ագիտացիայով, այլ դորժով լուծում տա միջակների կասկածամու-

թյան և հերքի կուլտուրների տարածած հերհյուրանք—ները։ Իս պետք է անել հետեւյալ ճանապարհավ։ Տեղբառմ, լավ դրված կոլտնտեսություններում հրավիրել կազմակերպված և վոչ-կազմակերպված չքավորների գործնական տեսակցություն։ Թող իրենք, կոլտնտեսությաններում կազմակերպված չքավորները այդ տեսակցությունների միջոցներով ուղարկ ու գեղացախարի որատմեն վոչ կազմակերպվածներին, թե նրանք ինչ ելին մտածում կոլտնտեսություն կազմակերպելուց առաջ, ինչու նրանք կազմակերպեցնեն հոգի համայնական ուղարկորժման ընկերություն, վոչ թե արտել, ինչպես գրեցնեն և զբանցեցնեն իրենց կանոնագրությունը, ինչ նպատակավ և զօրաեղից վարկեր ստացան և ինչպես են վճարելու վարկավ ստացած պարբռքը։

Կոլեկտիվացման համար այդպիսի գործնական ագիտացիա յե հանդիսանալու լայն զյուղացիական մասսաների ժողովներում, անկուսակցական կոնֆերանսներում և անզամ խորհուրդների շրջանային համագումարներում սրբեն կազմակերպված կոլտնտեսության տեսական դրության մասին արվող գեկուցումները։ Առանձնատես անհրաժեշտ է այդպիսի զեկուցումներ զնել չքավորական ժողովներում, ուր և մանրամասն ցուցմունքներ տալ այն մտան, թե ինչպես պետք է անդնել կոլտնտեսության կազմակերպման, ում պետք է զիմել այդ գործում աջակցություն ստանալու համար։

Կոլտնտեսությունների շինարարության զործում անհրաժեշտ է հրավիրել նաև կոռպերացիային և խորհուրդներին կեց չքավորական խմբակների ուշագրությունը։ Զքավորի ողնությունը չքավորին, —սա դասակարգային ողնություն է։

Անհրաժեշտ է ձգտել նաև այն բանին, վոր տեղական շրջանային ցուցահանդեսներում, ինչպես հարկներ, ներկայացվեն և խելացիորեն բացարկվեն կոլտնտեսությունների գյուղատնտեսական և տնտեսական նվա-

Ճռմները : Անհրաժեշտ է ամեն կերպ, չբջանային պատի լրագրի կամ գավառաւական թերթերի միջոցով ուսուցարաններ և հրապարակել կոլտնտեսության նվաճումները և կենդանի որբնակներով ցույց տալ նրանց սպասվեած թյունը .—սա կոլեկտիվացման համար ազիտացիայի բառակույն միջոցն է : Պետք է խռոսափել կոլեկտիվացման ոգտին ազիտացիա մղելու «ընդհանրապես», առանց զյուղացիության հետաքրքրող վորոշ որինակներ բերելու :

Ինքն ըստ ինքանն հասկանալի յէ, վոր կոլեկտիվացման ոգտին ապագրված ազիտացիան (թերթերի հաղորդաներ, գրքույկներ) պետք է առաջին տեղը բանի դյուզի խրճիթ-ընթերցարանների, կարմիր անկյունների և այլ կուրտ-կրթական հիմնարկների ծրագրների մեջ :

Ինչի՞ մասին պետք է հիշեցնել կուսակցական և անկառակցական ազիտառորներին : Նախ և առաջ խռոքը չպետք է առարերսվի զործից : Յեթե վորեւ բջիջ կամ չըջիամ յեռանդուն կերպով ազիտացիա յէ տանում կոլեկտիվացման համար, խոկ դրա հետ միասին վորեւ աջակցություն ցույց չի առլիս արդեն գոյություն ունեցող և նոր կազմակերպվող կոլտնտեսություններին, առա ամելի լավ և, վոր նրանք ամեննեին ազիտացիա չմղեն, վորպեսզի չարժանանան գառարկախոսության մեղմութանքին : Յերկրորդ, ազիտացիայի միջոցին կուսակցության կողմէր անիրազործելի խոստումներ չանել : Զպետք է խռոտումներ տալ վարկի, սերմացույի և այլ վորխատվությունների համար, առանց այդ մասին նախապետ համարատափառ կազմակերպությունների պաշտոնական համաձայնությունն ունենալու : Անիրազործելի խռոտումներ տալ .—նշանակում է վարկարեկել թե իրեն և թե այն մարմիններին, վորոնց անունից խռոտում է արվում :

ինչով պետք է արտահայտվի շրջկոմիների և բջիջ-ների գործնական կազմակերպված ոգությունը՝ նոր կազմակերպվող կոլտնտեսություններին:

Նորի և առաջ անհրաժեշտ է հենց առաջին քայլերից գործի լծել մոտակա շրջանային կամ կոոպերատուիլի գյուղատնտեսին և նրա մասնակցությամբ խնամքով քննության առնել կոլտնտեսություն կազմակերպելու բոլոր հիմնական հարցերն ու պայմանները։ Անհրաժեշտ է նաև առաջին հերթին պարզաբանել այն հարցը, թե կարող ե արդյոք նոր կազմակերպվող կոլտնտեսությունը վարկ ստանալ և ինչ նորատակի պետք ե ողտագործել այդ վարկը, վորպեսզի դրանից ստացված ողուտը վոչ միայն ծածկի վարկի տոկոսները, այլև կարելի լինի շուտափույթ կերպով ծածկել նաև վարկը։ Առանձնապես ուշադիր կերպով պետք է կշռադատել և հաշվի առնել ամեն ինչ՝ նոր կազմակերպվող կոլտնտեսության համար արակտոր կամ վորևել քանօգործեք մեքենան տարրա բնթացքում մեծ մասմբ կանգնած և լինելու անգործ, ապա լավ է հետաձգել գնումը, մինչև պարզվի մեքենայի լրիվ բանվորական բռնուավորման հնորավորությունը (որինակ, տրակտորի ոգտագործումն վորպես շարժիչ ուժի վորեն արտադրության կամ գյուղատնտեսական մթերքների վերսոմշակման համար)։

Նոր կազմակերպվող կոլտնտեսության կայուան կենսաւակտթյուն ուղարկում հակայական և հանախ վնասական նշանակություն ունի նրա կանսեպրարյաւնը։ Կամավոր (վոչ պետական) կազմակերպության համար կանոնադրությունը նույն նշանակությունն ունի, ինչպիսին ունի որենքը պետության մեջ։ Յեթե կանոնադրությունը գրված ե անհասկանալի, դժվար լեզվով, — դա կարող է խախտվել անգամ վոչ գյուղագորյալ կերպով, թյուրիմացաբար։ Կանոնադրու-

թյունը չհասկանալու պատճառով հաճախ թյուրիմա-
ցություններ և խառնաշփոթություններ են առաջանում
կոլտնաեսությունում։ Կանոնազրությունն անհասկա-
նալի գրված լինելու դեպքում կոլտաեսության ունեոր
ու ճարպիկ անդամները հեշտությամբ կարող են կոլ-
տնաեսության չքայլոր անդամներին յենթարկել իրենց՝
անհասկանալի գրված կանոնազրության կետերը սիստ
մեկնարանելու միջոցավ։

Վոչ մի կերպ չպետք է կազմակերպվել, այսողև
կոչված, նորմալ կոնսոնադրությամբ, առանց այլորե-
սին խորը և ուշադրությում քննության առնելու, ա-
ռանց կանոնազրության յուրաքանչյուր կետը հասկա-
նալի գարձնելու, վորովեսպի վոչ մի կասկած չսասա-
ջանա կոլտնաեսության ապագա անդամի մեջ։ Առանձ-
նապես, այդ ակսակետից անհրաժեշտ է պարզաբնույն
արագքական միջոցների համայնացման այն ասափե-
ճանի նշանակությունն ու հետեանքները, վորին հա-
մաձայնվել են հմանազիրները։ Եթիվ և միանգամայն
պարզ համաձայնության պետք է գտն նոեւ աշխատանքի
կազմակերպման և ընդհանուր արագքրության մթերք-
ները բաշխելու հարցերի շուրջը։ Հենց այդ հողի վրա
ծագած թյուրիմացությունները հանդիսանում են կոլ-
տնաեսությունների քայլքայման գլխավոր պատճառը։
Համեմկունի բջիջների ամենալայն աջակցությունը՝
կանոնադրությունը ստանալու կամ նախագիծը կոպ-
մելու և պարզաբնույնությունը կազմակերպման կարևորագույն խնդիր-
ներից մեկը։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յեւ, վոր կա-
նոնազրության պարզաբնույն և ընդհանրապես կոլ-
տնաեսության կազմակերպման այդ գործում բջիջը
կամ շրջկոմի պետք է տնօպայմանորեն մասնակից դար-
ձնի Գյուղկոոպերացիայի կոտ կոլտնակենտրոնի ներ-
կայացուցչին։

Միության կենսունակության և կայտնության վոչ
պահաս կարեսը պայմանը, — լինի դա հողը համայս-
տին ողագործող ընկերություն, արտել կամ կոմո-
նա, — հանդիսանում և կոլտնտեսության անդամների
խելացի և լավ ընտրությունը՝ ինչպես նրա կազմա-
կերպման, նույնպես և կոլտնտեսության անդամների
քանակի հետազա ամման ընթացքում։ Այս խմասառվ
անհրաժեշտ և ձգտել վոչ թե անդամների քանակին ավե-
լացնելուն, այլ հետեւ դրանց վրակին։

Սկզբից, գեռ ևս կանոնագրությունը դրանցելուց
տառաջ, Համկամկուսի ըթիկոմը կամ ըջիջը պետք և հե-
տեւն, վրապեսի համաձայն ԽՍՀՄ կուսափարության
1927 թ. մարտի 16-ի վորոշման, հիմնագիրների կազմի
մեջ լինեն 10-ից վոչ պակաս ընտանիքներ կամ տնտե-
սություններ։ Այդ որենքը նախազդուշացնում և ունեսը
և հարուստ մոտիկ բարեկամներից բազկացած կոլտրն-
տեսություն կազմակերպելու հանրավորությունը, վո-
րոնք կոլտնտեսություն են կազմակերպում ձեւկանո-
րեն, թղթի վրա, նպատակ ունենալով ողագործել
պետության զանազան արտոնությունները։ Որենքի այդ
ցուցմանընթացները նաև այլ նշանակություն ունեն։ 5-6
ըստանիքներից բազկացած շատ փոքրիկ կոլտնտեսու-
թյունն իր զորեղությունը շատ քիչ և տարբերվում մեկ
ուժեղ անհատական տնտեսությունից։ Այդ պատճառով
խոշոր կոլտնտեսություններ կազմակերպելու խնդիրը
հանդիսանում և կոլտնտեշնաբարության ամենակարե-
պուր հարցերից մեկը։ Այնուհետեւ պետք և հետեւ, վոր-
ուեսզի հիմնագիրների մեջ ըլինեն կուլտակների ներկա-
յացուցիչները, մանավանդ, յերբ դրանք կազմում են
հիմնագիրների մեծ մասը։ Նման գեապքում կոլտնտե-
սության իրական և միակ տերը կլինի կուլակը, իսկ
սա, իհարկե, անթույլատրելի յէ։ Սակայն չի կարելի
նաև այդ գործում շտապել և վոչ-մտածված ու հիմ-
նավորված կերպով մեղադրել հիմնագիրներին այն բա-

նում, վոր նրանք կոլտնտեսություն ևն կազմակերպում, յենելով կուլակային շահերից։ Հարկավոր և մանրամասնորեն ստուգել այդ կառկածները։ Կոլտընտեսության հիմնաղիրների, ևս առավել խորհրդի անդամների թվում չպետք ե թույլ տալ այնպիսի անձանց նկրկայությունը, վորոնք զերկված են խորհրդագներում ընտրելու իրավունքից։ Որենքի այդ ցուցմունքներին հետեւելով հնարավոր և կանխիկ կուլակների ձգտումն կոլտնտարժումն ոգտագործելու իրենց շահերին։

Բացի որենքի հիշված կետերին հետեւյաց, անհրաժեշտ է կոլտնտեսության անդամների ընտրության միջոցին նկատի ունենալ, վոր կոլտնտեսություններն իրենց վերապահված բոլոր արտօնություններով միասին հանդիսանում են վոչ թե զյուդի ուների, այլ չքավորության և սակավազոր միջակներին ոգնելու միջոցը։ Ուստի և կոլտնտեսության կազմակերպման ընթացքում չպետք է տարվել նրանով, վոր ունեսրի ընդունելությամբ ամրացվում է կոլեկտիվի պնտեսությունը։ Ունեսրն իրեն ունեցոծը ձեռքից բաց չի թողնի, իսկ յեթե նրան սկսեն սեխմել, նա պետք է կողմնակիցներ հավաքի իր շուրջը, այն գեղքում կոլտընտեսությունում անխուսափելի յե ներքին կոխվը, վորէ հետեւնքով սովորաբար կամ քայլայի՛լում է կոլտնտեսությունը, կամ գուրս են վոնդվում հարուստ հակառակությունները։ Իհարկե, յեթե Համկոմկուսի թվիջը և կոռպրատիվի հրահանգիչը խելացի միջամտություն ունենա, կարող է գուրս վոնդվել նաև խառնաշխութության հանցավորը, սակայն ամենից լավ և հենց սկզբից «այծին չթեղնել բոստան մտնի»։ Սա ավելի լավ է ու հեշտ, քան նրան այնտեղից հանելը։

Կոլտնտեսության մեջ պետք է ընդունվեն հետեւյալ անձինք. — ա. Գույքային շատ թե քիչ համաստրություն ունեցողները, թ. աշխատունակները և դեպի աշխատանքը բարեխիղճ վերաբերմունք ունեցողները և գ.

Հասարակական վարմիցովություն ունեցողները . սա անհրաժեշտ է նրա համար, վորովհետեւ խարդախանք ներն ավելի մեծ քայլայիչ հետեանքներ են ունենում կոլտնտեսություններում, քանի վորեւե մի այլ անդ :

Իսկ ինչ վերաբերում է այնպիսի հանգամանքների, ինչպիսին ե մեծ թվով անաշխատունակ անձինք ունեցող բազմանդամ ընտանիքներ ունենալը, ապա սու չի կարող պատճառ լինել կոլտնտեսության մեջ չընդունելուն: Կոլտնտեսությունում աշխատանքի կազմակերպման և նրա տեսական արտադրանքի բաշխման կանոնները պետք ե հիմված լինեն յուրաքանչյուր անդամի անձնական շահագրգուման վրա: Այդ կանոնները յերաշխիք են հանդիսանում նաև այն բանին, վոր քիչ թվով աշխատավորներ ունեցող մեծ ընտանիքը, ինչպես ասում են «վոչ վոքի կուլ չի տա»: Իհարկե կոլտնտեսության կանոնադրությունը և նրա ընդհանուր ժողովը պետք ե վորոշ հասարակական ոգնություն ցույց տա և ցույց ե տալիս նման ընտանիքներին, սակայն չի կարելի այդպիսի հասարակական բարեկործաթյուններ չեշաել կոլտնտեսությունների կանոնադրության մեջ: Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում դժվար ե իրականացնել «աշխատել ըստ ընդունակության» և «բաշխել ըստ պահանջների» կոնոնները: Ներկա պայմաններում տնտեսական աճման և կոլտնտեսության ամրապնդման շարժիչ ուժը հանդիսանում ե նրա յուրաքանչյուր անդամի անձնական նյութական շահագրգումը:

Կոլտնտեսությունում ներքին կենցաղային անկանոնությունները հանդիսանում են կոլտնտարժման ամենաեական բացասական կողմերը: Այդ անկարգությունները գլխավորապես սկսվում են կոլտնտեսության կին անդամների միջև, հիմք ունենալով կանանց հատուկ կապվածությունն իրեն տնտեսության: Այդ ստրկական կապվածությունն՝ իր խոհանոցին, իրեն

Հերթին պայմանավորված և կանանց գարեոր ճորտուցումով։ Սյու հիմնական նախապաշտման դեմ անհրաժեշտ և վոչ միայն զբքի ընդհանուր ազիտացիան, այլ կանանց կենդանի և հասուկ ազիտացիան։ Այսուղ միայն կոմունիստ-վեղջկուհին՝ ինքն անցնելով այդ հորտոթյունից ազտապքրվելու հոգերանական հեղաշրջման ուղին, — կարող և այդ մասին խոսել թե սրտանց և թե համոզեցացից։ Կնոջ արդպիսի ազիտացիան— վեղջկուհիների միջե, նբանց հետ սրտանց զրոյցներ անհնալը պետք է դառնա չքանային կին կազմակերպչի կամ զավեկոմի կիննրաժնի անմիջական խնդիրը՝ կուտանսաթյուն կազմակերպելու, կամ ընկերությունը կոմունայի և արտելի վերածելու գործում։

Եղանակառություններում կանանց մեջ աշխատանքների ուժեղացումն անհրաժեշտ և վոչ միայն նրա համար, վոր զա խաղաղեցնում և կոլանակության ներքին կենցաղը, այլև նրա համար, վոր կոլանակությունները թե տեսականորեն և թե գործնականում հանդիսանում են նոր կենցաղի սազմերը գյուղում։ Կուտանսաթյուն կանայք պետք է բավականաչափ նախապատրաստաված լինեն նրա համար, վորպեսզի դառնան նոր սոցիալխառական կենցաղի պիտուններները և նախաձեռնողները։ Կորոնատեսության կանայք պետք է լինեն հասարակական սննդի, հասարակական լվացանների, և վոր զալիավորն և — յերեխանների հասարակական դաստիարակման առաջին նախօւձեռնողները։ Ներկայումս հաճախ զործը հակառակն է ընթանում, — աղամարդիկի կողմնակից են կորոնատեսություններում կենցաղի համայնացման, իսկ կանայք հակառակ կողմն են քաշում։

Յեթե գյուղում կանանց մեջ աշխատանք տանելը նպաստակ ունի ազատագրել նրանց կենցաղային սոցը կացումից, ապա դրա համար ավելի լավ հենարաններ չկունի, քան համայնացված կենցաղով կոլանակու-

թյունները։ Կինբաժինները պետք ե բոլոր կորանտեսությունները վերածեն այլպիսի հենարանների։

Հիմնադիրներ ընտրելուց և կանոնադրությունը քննելուց ու սղարդաբաններուց հետո, պետք ե դիմել գավառային հողբաժնին, վորպեսզի միանգամբ հենց Հոգուշինարարման յենթարկի կազմակերպվող կորտնեսությունը և առանձին տեղում հող տրամադրի։ Կորտնեսութինարարության բազմամյա փորձն անվիճելիութեն ապացուցում և, վոր անհրաժեշտ և հոգուշինարարում կատարել, վորպիսին ապահովում և կորտնեսության նրա անդամների միջև առաջացած ամենաչնչին թյուրիմացության հետևանքով աբագ քայլայվելուց։ Իսկ այսպիսի թյուրիմացություններն անխռուսավիելի յեն, քանի գեռ մարդկի չեն սովորել կոլեկտիվ աշխատանքի։ Հոգուշինարարության զործին պետք ե մասնակցի գրուդատնեսը, վորը կպարզաբանի անսեսության ավելի շահավետ ուղղությունը և՝ թե ինչ պետք ե մշակել ավյալ հողամասում։ Ինքն ըստ ինքանի հասկանալի յե, վոր անսեսության ծրագիրը պետք ե հաշվի առնի ինչպես ավյալ շրջանի գյուղատնտեսության ընդհանուր ուղղությունը, նույնպես և տեղական շուկան ու ավելի լայն շուկայում շահավետ աշխատելու կամ արտահանելու հենարավորությունը։

Նպառակահարմաք և ոգտավիտ ե կոլտնտշինարարության մասնակից դարձնել գյուղացիական փոխողկամներին, տեղական կոռուպտատիվ կազմակերպությունների վարչություններին և գյուղանուան աշխատավորների միարյան։ Գյուղական Փոխողկոմների սամենակարեռը խնդիրներից մեկը չքավորության կոռոպիրոցումը և կոլեկտիվացումն ե։ Իրազործելով այդ հասարակական ինդիբը, Փոխողկոմները կարող են և պետք ե իրենց միջոցներից ոգնեն գյուղի չքավորության, վորը ձգուում է զեղութեալի կորտնեսություն, սակայն վորը վաճինչ չունի լացի մի զույգ ձեռներից։

Կոլտնակնություն մանել ցանկացող չքավորներին և բարբակներին այդպիսի ողնություն կարող են և պետք է ցույց տան գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվները։ Այդ ողնությունը պետք է արտահայտվի նրանով, վոր Գյուղփոխերը և կոռալերատիվները չքավորական կոռալերացման Փոնդից վորոշ գումար են մուծում նոր կազմակերպվող կոլտնակնության՝ նրա չունեոր անդամի փայտվճարի գիմաց։

Գյուղանուառ աշխատավորների Արհմիության տեղական մարմինները նույնպես կարող են և պետք է դանագան աջակցություն ցույց տան կազմակերպվող կորանտեսության, յեթե վոչ նյութապես, ապա հաջմակերպչորեն։ Այդ ողնությունը պետք է կայտնա նրանում, վոր որինակ, միությունը կարող է իր անդամ գյուղատնտեսին պրոֆեսիոնալ գիտցիալիցինայի կարդով գործուղղել կոլտնակնություն՝ նրա տնտեսական ծրագիրը կազմելու կամ գյուղատնտեսական խորհուրդներու ցուցմունքներ տալու։

Երջամմի կամ բջիջի քարտուղարը պետք է ամեն կերպ աջակցեն կորոնտեսության՝ նրա կանոնադրությունը գրանցելու, հողաշինարարության և վարկեր ստանալու գործում։

Նոր կոլտնակնության գոյության տուածին շրջանում անհրաժեշտ է հետեւել, վոր գյուղկոռալերացիայի տեղական միությունը վոչ միայն ոգնի նրան կազմակերպվելու իր հրահանգչի մասնակցությամբ, այլև հենց սկզբից տնտեսապես շահագրգռուի կոլտնակնության, վորապես վերջինս անդամագրովի միության։ Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր կոլտնակնության անդամակցությունը միությանը սահմանափակվի միայն նրա միակողմանի ակտիվությամբ, այսինքն անդամավճարներ մուծելով։

Յեթե նոր կոլտնակնությունը անդամագրվում է գյուղատնտեսական վարկային ընկերության, ապա

գավկոմը կամ շրջկոմը պետք եւ համապատասխան ֆրակցիայի միջոցով հետեւի, վորպեսզի կոլտնտեսությունը վոչ մի տեսակետից չհավասարվի ընկերության անհատական անդամին, մանավանդ՝ վարկ ստանալու վործում։ Իհարկե նման դեպքերում չի կարելի զուտ վարչական միջոցներով ազգել վարկային ընկերության վարչության վրա, այլ պետք եւ վործել ընկերության կանոնադրության մեջ նախատեսված կարգով։

Ընդհանուր առմամբ, կոլտնտեսության գոյության տատշին շրջանում, քանի նու չի ամրապնդվել ներքնապես և տնտեսապես, պետք եւ նրան շրջապատել բջիջի կամ շրջկոմի կողմից ընկերական ուշադրության և աջակցության մթնոլորտով, այլ ուշադրությունը շփերածելով անդործնական ավելորդախոսության։

Յ. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՂԵԿԱՎԱՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլտնտշարժման նկատմամբ կուսակցության ճիշտ գեկավարումն իրագործելու և նրան գործնական աջակցություն ցույց տալու ամենակարեւոր պայմանը հանգիստանում ե՝ Համկոմիկուսի գյուղական քիջների և շրջկոմների կենդանի կապը՝ տվյալ շրջանի կոլտընտեսությունների հետ։

Այս այրուբենական ճշմարտությունը բոլոր բջիջների և շրջկոմների համար ել հասկանալի չե։ Ռուսաստանի Սմոլենսկու նահանգում 1927 թ. կատարված կոլտնտեսությունների հետազոտումը պարզեց, վոր 126 կոլտնտեսությունից 58-ը «միանգամայն կտրված են յեղել տեղական կուսակցական, խորհրդային և հաստրակական կազմակերպություններից»։ Մոտավորապես նույնպիսի պատկեր ե յերեւան հանված նաև մի շարք այլ նահանգներում։

Կոլտնտշարժման այլ կտրվածության մեջ հանցավոր են վոչ միայն դյուղի խորհրդային, կուսակցական

և հաստրակական կազմակերպությունները, այլև հենց իրենք՝ կորանտեսությունները, հանձինս իրենց խորհուրդների։ Յեփս առավել, Համեկ. կ. գյուղրջիջներն ու քջկոմներն չպետք եւ արդարանան, բերելով այն առածը, թէ «մինչեւ յերեխան լաց չլինի, —մայրը կաթ չի տա»։ Վոչ մի արժեք չունի այն մայրը, վորն յերեխայի համար մուածում և միայն այն ժամանակ, յերբ յերեխան լաց և լինաւմ։ Գյուղրջիջները և քրջկոմները պետք եւ կապ հաստատեն կորանտեսությունների հետ անդամ այն գեղգում, յեթե գրան չի ձգաւոմ ինքը՝ կորանտեսություններ։ Նման գեղգերում պետք եւ ամելի ձգաւոյ կապ հաստատելու այդպիսի կորանտեսությունների հետ, վորագեղի խմացվի, թէ նրա կորպումություն պատճառը կորանտեսության հակա-հաստրակական թերում ունենալը կամ ներսից նրա վրա հակախորհրդացին ազդեցություն լինելը չե՞ արդյոք։ Յեթե դա այդպիս ե, ապա պետք եւ անմիջապիս ազդել հակա-հաստրական թերումը և վերացնել հակախորհրդացին ազդեցությունը։

Կորանտեսությունների, ինչպես և յուրաքանչյուր խորհրդացին և հաստրակական կազմակերպության նրա կառմամբ կուսակցական գեկավարությունը նպատակ ունի նրանց անումն ու գորդացումն ուղղել սոցիալիստական շինարարության ազդիով։ Կուպիտասլիստական առքրերի գեմ պայքարելու ազդիով, —իսկ ներկա գեղգում՝ պայքարելու չքավարության վրա կուլակային ազդեցության և այդ չքավարության կուլակի կողմից շահագործելու գեմ։

Սակայն այդ նպատակին կարելի յե հասնել վոչ րոլոր ազիներով, այսինքն, գեկավարման րոլոր միջոցների գործադրումով։ գեկավարման մի քանի միջոցների գործադրումը հանդում և կապիտալիստական առքրերի ազդեցության ամրապնդման։ Այդ պատճառով ել անհրաժեշտ և մանրամասնորեն կանգ առնել

այն հարցի վրա, թե ինչպես և ինչպիսի միջոցներով
պետք է կենսագործել կուսղեկավարությունը՝ կոլտրն-
տեսությունների նկատմամբ, այլ կերպ ասած՝ ինչ և
պետք անել և ինչ չանել այդ ուղղությամբ:

Ամենից առաջ անհրաժեշտ է հիշեցնել Վ. Ի. Լե-
նինի Հրահանգը գյուղի աշխատակիցներին.—

— Զհամարձակվել Հրամայիլ:

Հաղոց արդեն, զեռ 1919 թ. և արձակված ոյտ
Հրամանը, բայց մի քանի խոռվանկյաններում առան-
ձին կոմունիստները, լինում են նուև ամրող բջիջներ,
վոր գեներ կուսակցական ղեկավարությունը հասկո-
նում են վորպես Հրաման և վարչական ճնշում:

Յուրաքանչյուր կոմունիստ, վորը շարունակում է
Հրամայիլ և վարչական միջոցներ գործադրել այնանզ,
ուր հարկավոր և դործնուկան ոպնություն և բնկերա-
կան պարզաբանում, — պետք է Համեմկուսի բջիջի
կողմից վորակավորվի վորպես վարկարեկիչ մարդ՝
թեկուզ անգիտակցարար, վորպես՝ գյուղացիական չքս-
վորամիջակային մասսաների և կոմիկուսակցության,
հետեւարար պրոլետարիատի հետ մերձեցման կազմա-
լուծում։ Համենայն գեալս, անհրաժեշտ և նման կոմու-
նիստին հեռացնել գյուղական աշխատանքներից։ Սա
յիշ պահանջում Վ. Ի. Լենինը նման «Հրամանատու-
ների» նկատմամբ։

Անհրաժեշտ է գյուղի հասարակական կազմակեր-
պությունների ղեկավարման ձևերի նկատմամբ կո-
սակցության տված Հրահանգները խախտող կոմունիս-
տին պատասխանատվության յենթարկել վոչ միայն
այն գեպքում, յերբ նա ինքն և խախտում այդ ցուց-
մունքները, այլև այն գեպքում, յերբ նա իմանալով՝
չի բողոքում այն Հրամանների և ձիգ տալու գեմ, վո-
րոնք գործադրում են անկուսակցական ծառայողները
Ժամ տեղական խորհրդային մաքմինների ընտրովի աշ-
խատակեցները։

Վերցնենք մի այսպիսի որբնակ: Գյուղխորհրդի անկուսակցական նախագահն, կամ մի այլ իշխանավոր խառնվում և կոլտնաեսության ներքին զործերին և կոպիտ հրամանները են արձակում, վորի հետեաքով անգամները այլևս կոլտնտեսությունը չեն համարում իրենց ուսիսական անտեսությունը, այլ՝ պետական: Սուարդեն վնասակար ե: Բայց ավելի վնասակար ե այն, յերբ այդ հրամանները վնասում կամ քայլայում են կողեկատիվ անտեսությունը: Այժմ յենթագրենք, վոր կոմունիստը դիտե անկուսակցական իշխանավորի այդպիսի վնասակար և քայլայիչ վերաբերմունքը կոլտընտեսության նկատմար, բայց վոչ մի միջոցի չի գիտում, այսինքն՝ փորձ չի անում մատնանշել անկուսակցականին նրա սիսալ գործունեությունը և այդ մասին չի տեղեկացնում բջիջին: Կուսողական հրահանգների խախտման նկատմամբ այդպիսի անտարեր կոմունիստին անհրաժեշտ է կարգի հրավիրել: Իսկ ինչ վերաբերում է կուսակցական և անկուսակցական «հրամանառուներին», ապա նրանց հրամայելու և ձիգ տալու մասին, — մանավանդ այն դեպքում, յերբ այդպիսիները տնտեսական վնաս են հասցնում կոլտնտեսության, — անհրաժեշտ է հաղորդել զավկոմին կամ անժիշտապես Բանդյուզտեսության Բողոքների Բյուրոյին՝ նրանց դատական կամ վարչական պատասխանատվության յենթարկելու համար:

Համկումկուսի բջիջը կամ յուրաքանչյուր առանձին կումունիստը, վորպես այդպիսին, այսինքն՝ յեթե նա համապատասխան պաշտոնատար անձ չեն, — չպետք է վարչական միջամտություն ունենա կոլտնտեսության վերաբերմամբ անգամ այն դեպքում, յեթե նրան թրվում ե, վոր տվյալ կոլտնտեսությունը խախտում է խորհրդային օրենքները: Հանցագործությունը կանխելը համապատասխան վարչական մարմինների գործն ե: Իսկ Համկոմկուսի բջիջի և առանձին կոմունիստների

ինդիրն եւ հանցագործության կամ որենքի խախտման
մասին հաղորդել համապատասխան մարմիններին,
ի հարկե աշխատելով միանդամայն վերացնել այդ ա-
րարքները:

Հրամայել չի կարելի: Սակայն, այդ գեպքում ինչ-
պես իրականացել զեկավարությունը: Վ. Ի. Լենինը
այդ հարցին ևս միանդամայն պարզ պատասխան է տվել:
Համեմկուսի VIII համագումարին միջակ գյուղացիու-
թյան առթիվ, նրա առաջարկած բանաձեռ կուսղեկա-
վարությունը հիմնում է միջակ գյուղացիության նր-
կառմամբ գաղափարական ներդորդություն ունենալու,
նրա հետ գործնական համաձայնության դարս և նը-
րուն զիճումներ անելու վրա: Հասկանալի յե, վոր այդ
հիմունքներով ել պետք է տարվի նաև կոլտնակու-
թյունների զեկավարությունը, վորպես գյուղացիական
չքուվոր-միջակային կազմակերպությունների:

Համբերառար և հաւեկանալի պարզաբանելու առա-
ջարկով ձեւնարկումների բարությունը, որինակ
ըերերով կոլտնակությունների փորձը. մատնանշել
կոլտնակությունների կողմից կատարված սխալների
հնարավոր վատ հետևանքները, սակայն առանց հրա-
մանների և սպառնափառների, այլ՝ կոլտնակության
գործնական կազմակերպված ոգնություն հասցնելու,
պաշտպանել նրա շահերը զանազան հիմնարկներում և
կազմակերպություններում, ինչպես և պաշտպանել նը-
րան կուլտակային հարձակումներից,—ահա հիմնակա-
նում ինչի յե հանգում կոլտնակությունների նկատ-
մամբ կուսղեկավարությունը: Սակայն, զեկավարման
այդ ձեւների կիրառման հետ միասին պետք է հիշել,—
1. Զի կարելի խորհուրդ տալ կոլտնակության, այն ել
կուսակցության անունից, կատարել այն, վորի ոգտա-
կարության մասին դու ինքդ ել գործնականում լավ
համոզված չես: 2. Վորպեսզի հնարավոր լինի իրակա-
նում, խորհուրդներով կամ գործնականապես ոգնել

կոլտնասեսության և պաշտպանել նրան, անհրաժեշտ է լրավ տեղյակի լինել նրա տնտեսության զրության, նրա անդամների ներքին հասարակական հարաբերության ներքի մասին:

Մի գյուղական բջիջի քարտուղար, վորք վայելում էր այդ շրջանի գյուղացիության հարգանքը, առաջարկեց կոլտնասեսության կարտոֆիլը տնկել խոր փոսերի մեջ, ինչպես, իրքի թե անկում հնգերմանիայում և մեծ րերք են սահմանման: Կոլտնասությունն աչքի առաջ առնեարավ, վոր կոմկուսակցությունն իրեն չի խարի, բայց նրա պատասխանատու ներկայացուցին, կարտոֆիլը տնկեց խոր փոսերի մեջ և... վոչինչ շատացավ: Յեթե այդ քարտուղարը վորեն մեկի խորհուրդով մոլորության մեջ է յեղել, ապա կուսակցությանը վարկարեկելու նրա հանցանքը դրանով չի մեղմանում, վորովհետո նա թեև անգիտակցարար, բայց դժուհությունն առաջացրել զեպի կոմկուսակցությունը: Հարկավոր էր, վոր նախ և առաջ նա ինքը զարձնականում ստուգեր տվյալ պայմաններում գերմանական ձեռով կարտոֆիլ ցանելու ողափարությունը և հետո նույնն առաջարկեր ուրիշներին:

Այժմ րերենք անհաջող խորհրդի մի այլ որբնակ, բայց այս անդամ կոմեկտիվի տնտեսության մեջ խոռոշիկ փորձով: Ռուսատանի Պակովի նահանդի կոմանոներից մեկում, Համկոմկուսի շրջկոմի տված խորհրդում զնվում է յերկու տրակտոր.—քանի վոր մի տրակտորն սպուտ է, յերկուսն ավելի սպառակար կլինի, - մասածում է շրջկոմը: Բայց գործնականում պարզ էց, վոր տեղական պայմանների պատճառով (հողի առանձնահատկությունը, ձիով հերկելու եժանությունը և այլն), այդ յերկու տրակտորները վոյ մի ողուտ չափեն, այլ իրենց արժեքի տոկոսներով քայլայեցին կունեկտիվի տնտեսությունը, և իրենք հանգիստ պարկեցին ծածկի տակ:

Նման «խորհուրդների» մասին անհրաժեշտ ե հազարդէլ գավկոմին, իսկ կարեսը գեպքերում՝ նաև զատափաղին՝ նրանց կուսպատասխանառվաթյան յինքտրեկելու և լուծելու այն հարցը, թե քրեական կամ քաղաքացիական որենսգրքի վոր հոդվածավ պետք ե պատասխանառվաթյան կանչել խորհրդատառներին, վորոնք թեև վոչ շահագիտական նպատակներով այդպիսի գործառքի մեջ են քաշել կորանտեսության: Չի խանգարի համապատասխան զավկոմին հետաքրքրվել այն հարցով, թե ինչ եյին ականում և մտածում այն կոոպերատիվ միության կամ վարկային հիմնարկաթյան կոմունիտետը. վորոնք կորանտեսության վարկավորել են նրա վարկունակությունից վեր, բայց վորում համարյա անգետք մեքենաներ գնելու համար:

Կոլեկտիվին գյուղատնտեսության գործնական ողնություն ցույց տալու գործում անհրաժեշտ ե կապ հաստատել մոռակա գյուղատնտեսի կամ փորձառու հիմնարկության հետ, և կամ ուղղակի կազմակերպել կոլտնտեսության անդամների եքակուրսիա՝ մոռակա, բայց կազմակերպված յեկամատարեր կորանտեսությունը կամ խորհրդային տնտեսությունն այցելելու համար:

Կորանտեսության ոգնելու արդպիսի գործնական ձեռնարկումները նրան անկասկածորեն և անսխալ կատանեն զեսի արտադրողականության բարձրացում, վորութիսին հանդիսանում ե կուսղեկավարության կարեռքադրույն նապատակներից մեկը, և վոր գլխավորն և, այդմիջոցները կարող են իրավործել յուրաքանչյուր, ամենաթույլ ըջիջը և անգամ առանձին կոմունիտար:

Կորանտեսության աշխատանքներում կուսակցության համար ցանկալի ուղղության համրերատար, հանդիսաւ և համառ պարզաբանումը՝ միակ միջոցն և առավելագույն արդյունքների հասնելու: Հասկանալի յեւ վոր կուլտակային կեղծ-կորանտեսության վոչ մի համառության և համրերատարությամբ չես կարող թեքել

շքայիրության շահերի պաշտպանության ուղին։ Սակայն այստեղ հարկավոր և վորոշ կայունություն և դդուչություն։ Յերե կոլտնտեսությունը շեղվել և իր նախագարեց, փորովիետև նրանում դեկավարությունը գտնված է շահամոլ կուլակների կամ նրանց պաշտպանների մի փոքր խմբի ձեռքում, դա դեռ չի նշանակում, վոր խաչ պետք է դնել նման կոլտնտեսության վրա։ Հենց այստեղ և, վոր պիտի գործադրել համբերատար և հանգիստ վճռականություն՝ պարզաբանելու մյուս անդամներին իրենց իրավունքները, ինչպես և կոլտնտեսությունից կուլակյային «Հրժանատառներին» և գիմակավորված շահագործողներին հեռացնելու հասրավորությունն ու անհրաժեշտությունը, ծայրագույն գեղքում՝ հեռացնելով նրանց կոլեկտիվի անտեսությունը զեկովարելուց։

Ամեն կերպ բարձրացնել կոլտնտեսության անդամների գիտակցությունը և զարգացնել նրանց հասարակական ինքնազործունեությունը, — սա կուպեկավարության կարեռազույցն խնդիրն է և հանդիսանում է ավելի բրական միջոց՝ ամբազնիքելու կոլտնտշարժումը և ապահովելու այն կուլակյային բագնված շահագործումից կոլտնտեսության ներսում։ Կոլտնտշարժման այն կարեռ խնդիրը, ինչպիսին և արագագործականության բարձրացումն, — խոշոր չափով կախված է կոլտնտեսության անդամների գիտակցությունից և հասրակական ինքնազործունեությունից։

Կոլտնտեսությունների անդամների գիտակցության և ինքնազործունեության գաստիարակման պետք են ասնել նույն և առաջ նրանով, վոր կոլտնտեսության զեկավարները տնտեսության բոլոր կարեռ հարցերը և խընդիրները գնեն բնդհանուր ժողովի քննության։ Սա անհրաժեշտ և իրագործել նուև այն գեղքերում, յերբ կոլտնտեսության զեկավարները վայելում են մյուս անդամների կատարյալ վատահությունն ու հարգանքը։

Համկոմկուսի ըքջկոմները և բջիջները պետք և ուշադրությամբ հետևեն, վորպեսզի կոլտնտեսության զեկավարները գաղտադողի, միայն իրենց միջն չուծեն կոլեկտիվի տնտեսության վերաբերող հարցերը: Կոլտնտեսության անկուսակցական դեկավարներին անիրաժեշտ և համոզել կոլտնտեսության ներքին դեմոկրատիան պահպանելու գործնական նպատակահարմարությանը, իսկ կոմունիստներին առաջարկել անպայմանորեն և կուսդիսցիպլինայի կարգով կիրառել այն:

Կոլտնտեսության կուսդեկավարությունն ինչպես պետք և կիրառի այն բջիջը, վոր գլխավորապես կամ մամրոգչապես բաղկացած և ավյալ կոլտնտեսության անդամներից: Ի հարկի, պետք և վորոշ տարբերություն լինի նման բջիջի և այնպիսի բջիջի կուսդեկավարության ձեերի մեջ, վորի կազմի մեջ չկան վճռական քանակության կոլտնտեսության անդամ կոմունիստներ:

Կոլտնտեսության անդամ կոմունիստները, մանուկանոց՝ դիլուսվորապես ավյալ կոլտնտեսության անդամներից բաղկացած կոմբջիջները վոչ մի բառե չպետք և մոռանան, վոր կոլտնտեսությունն անկուսակցական կազմակերպություն և, անզամ այն դեպքում, յեթե դըրա անդամների մեծ մասը կոմունիստներ են: Այս բանը պետք և չէ չել նրա համար, վորպեսզի կոլտնտեսության անկուսակցական անդամներն իրենց սահմանափակված չզգան՝ կոլեկտիվի տնտեսությունը կառավարելու գործում իրենց կարծիքն ու ցանկություններն արտահայտելու:

Ինչպես հայտնի յե, կոմկուսակցությունը նախոտեսնում է, վոր անհամեշտ և, վոչ միայն կոլտնտեսություններում, այլև անհատական տնտեսություններում լավացնել անսսունների ցեղը: Սակայն միանդամտյն անթույլատրելի յե, վոր կոլտնտեսության անդամ կոմունիստը դըրա հիման վրա միայն պնդի կոլտնտեսության համար, որինակ՝ ազնվացեղ ձի գնել, աչքի ա-

սաջ չունենալով, վոր այդ ձին կամ կոլտնահսության տժերից վեր և և կամ նրան այնքան անհրաժեշտ չէ, վորքան մի վորեկ մեքենա:

Խոչոր կորտահսության կոմբջիջը կարող և և պետք է իր հետերից տանիի իր անկուսակցական ընկերներին: Ասկայն զա պիտք և անել բացասապես—ա. Համեմատած անկուսակցական անգամներին, կոմունիստների կողմից աշխատանքի ավելի բարիքածություն և ընդհանուրապես կոյշեկտիվի անհանություն ավելի նվիրվածություն հայտնարերելու միջոցով, բ. կարողանալով համոզել անկուսակցական անգամներին կատարել այս ինչ բանը, վոչ թե մեկ ուրիշը և գ. միաննություն հայտնարերելու և իրենց շարքերում առաջնորդ առաջնորդած առաջատարանությունները վերացնելու միջոցով:

Մինչև 1927 թ. աշունը Համեմոմիկուսի զյուզական կազմակերպությունները քիչ ելին հետաքրքրվում կողեկտիվ անսեհսությունների վարչական մարմինների վերընտրություններով, Համեմայն զեպո, —ավելի քիչ քան կոսովերացիայի ընդհանուր վերընտրական կամպանիայով: Կոլտնահսություններում վերընտրական կամպանիան խոչըր քաղաքական և անսեհսուկան նշանակություն ունի: Կորանաչարժմուն ամենացավուա կողմանից մեկը կոլտնահսություններում ձևոնահաս զեկագարներ չլինելին է: Վոչ թե այն պատճառով, վոր այդպիսի մարդիկ չկան կոլտնահսության ակտիվում, այլ այն պատճառով, վոր գրանց վոչ վոք առաջ չի քաշում և նրանք մնում են աննկատելի:

Կոլտնահսության աշխատանքների մասին տրվող զեկուցման հետ միասին լավ տարված վերընտրական կամպանիան ամենահարմար մոմենտն և նոր կազմակերպչական ուժեր առաջ քաշելու համար: Զեկուցման առթիվ վիճարանությունների խելացի զեկագարությունը և հետագա աշխատանքների առաջադրումը հընարավորություն և տալիս գիտակից և յեռանգուն ակ-

տիվիստներին իրենք առաջ քաշվել ընդհանուր մաս-
այի միջից։ Նրանց հարկավոր և պնդել միայն առաջ
գնալու, նրանց մի քիչ զբաղխություն, հաշվինք
պահել և ականիվիստի համար այլ անհրաժեշտ զիտե-
լիքներ սպառեցնել։

Վորագեաղի կորանակառությաններում հաշվեառ և
վերբնարական ժողովներն ուժանդակեն՝ թե նոր ակ-
ամփիստ-զեկավարներ առաջ քաշելու և թե բարձրա-
ցնելու կորանակառության բոլոր անդամների ականիվու-
թյունը, անհրաժեշտ և որակարգում այնպիսի հարցեր
գնել, վորոնք զբագին ամբողջ ժողովի ուշադրու-
թյունը, —որինակ՝ կուեկտիվի անակառության ու կեն-
ցազին վերաբերող խնդիրներն ու հարցերը։

Շատ ոգտակար և այդ ժողովներին հրավիրել նաև
հարեաններին, վորոնք կորանակառության անդամ չեն,
մանավանդ՝ չքավորներին։ Թող նրանք քննադատեն, —
վոչինչ, բացի լավից՝ ուրիշ բան չի պատահի։ Տնու-
սության և կենցաղի մի քանի թերությունները նկա-
տելի յեն միայն դրսից։ Յեթե կուեկտիվի անակառու-
թյունն ամբազնդված և և լույ և զարգանում, — նման
հաշվեառ զեկուցումները վոչ-կուլտնակառության ան-
դամ չքավոր հարեանների համար կուեկտիվացման
ոգտին ամենալավ ձեի ագիտացիան և։

Կորանակառության խորհրդի ընտրության ընթաց-
քում, բջիջը և շրջկոմը չպետք և ձգտեն վորքան կո-
րելի յե մեծ թվով կոմունիստներ անցկացնել խորհրդի
մեջ։ Այդ հարցում բացի քաղաքական նպատակահար-
մարությունից, պետք և աչքի առաջ ունենալ նաև կո-
մունիստների անակառական ոգտարք խորհրդում։ Յեթե,
որինակ՝ խորհրդի անդամության կամ նախագահի հո-
մար առաջադրված անկուսակցական թեկնածուն ակ-
նահայտորեն ավելի ուժեղ և վորպես անակառակար,
քան կոմունիստ թեկնածուն, ապա գյուղկոմբջիջը կա-
րող և պետք և ասի կորանակառության անդամ կո-

Տունիստներին, վոր նրանք չառաջադրեն իրենց այդ
թեկնածուն, այլ քվեարկեն հոգուա անկուսակցա-
կանի, —իհարկե, յեթե այդ անկուսակցականը հայտնի
յէ, վորպես խորհրդացին իշխանության անկեղծ ու
մաքուր կողմնակիցը և վորպես կոլտնտշինաբարու-
թյան նվիրված մարդ:

Նեկավար աշխատանքների առաջ քաշելու հար-
ցում կոմսնիստների համեստությունը, վորն անհրա-
ժեշտ և առողջ կոլտնտեսությունում, կարող և պոչա-
կայություն լինել այնպիսի կոլտնտեսությունում, որ
զոյտություն ունի կուսակցության թշնամի տարրերի
վորոշակի և կազմակերպված ազգեցություն։ Պետք է
ձգտել արդարեղ կոմունիստներին անցկացնել խորհրդի
ժեջ, սակայն, հասկանալի յէ՝ այն կոմունիստներին,
վորոնք կարող են առաջ տանել կոլտնտեսության զե-
կովարման գործը։

Միանգամայն անթույլատրելի յէ զյուղրջիների
և շրջկոմների կողմից կոլտնտեսության գլխին խոր-
հրրդի անդամ կամ նախագահ կազել այնպիսի կոմու-
նիստի, վորն անդամ չե ամփալ կոլտնտեսություն։ Կոլ-
տնտեսության անդամները կորեկտիվի համար նման
ուսար մարդուն կհամարեն նշանակովի, յեթե անդամ
նա ընտրվի կոլտնտեսության ընդհանուր ժողովում։
Դյուզրջիների և շրջկոմների խնդիրն ե՝ զասախարա-
կել խելացի զեկավարներ կոլտնտեսության միջից,
վոչ թե դրսից նման զեկավարներ կապել կորեկտիվի
դիմին։

Յեթե կոլտնտեսության խորհրդում կան կոմֆրակ-
ցիա կազմելու համար անհրաժեշտ քանակությամբ
կոմունիստներ, ապա, հասկանալի յէ, վոր պետք է
կազմակերպվի նման Փրակցիա, սակայն նա չպետք է
առանց վորեն անհրաժեշտության առանձնանա խոր-
հրրդի մնացած մասից, և վոր գլխավորն ե՝ խորհուր-
դը չփոխարինի իրենով։

Կոլտնտեսության կոմբջիջի ընդհանուր կուսակցական կյանքն ու աշխատանքը պետք է ընթանա կոլտընտեսության անկուսակցական անդամներին ակնհայտ կերպով։ Կոլտնտեսության բջիջի ընդհանուր ժողովները պետք եւ գլխավորապես դռնբաց լինեն կոլտեկտիվի մյուս անդամների համար։ Կոլտնտեսության բջիջի համար ավելի հեշտ է, քան այլ բջիջների, լուծել գյուղական անկուսակցական ակտիվին իր չուրջը համախմբելու հարցը, —չեւ վոր կոլտնտեսության անդամների մեծ մասը հենց այդ ակտիվին է։ Հենց այդ ակտիվին է, վորն ինչպես ասում են, հաճախ մի ծածկուական ան ապրում բջիջի հետ, յերբեմն ել մի ամանից կերակուր ուսում։ Այս մասին շպետք եւ մոռանա նաև շրջկոմը, կոլտնտեսություններն ոգտագործելով վորպես հենարան՝ խորհուրդների վերընտրության, չբավորական ժողովներ գումարելու, ինչպես և զանազան հեղափոխական տոներ տոնելու, կամպանիաներ տանելու և ընդհանրապես բոլոր գեղաքերում կոմիտուակցությունը գյուղացիական լայն մասսաների առաջ յելույթներ ունենալու ընթացքում։ Վորպես կազմակերպչական հենարանի՝ կոլտնտեսության այդպիսի ոգտագործումն ամենալավ միջոցն է նրան շրջակա բնակչության հետ կապելու համար։ Սակայն այդու հանդերձ, պետք եւ հետեւել, վոր կոլտնտեսությունների նման ոգտագործումը նյութական վնասներ չհասցնի նրանց։ Այս բանը չպետք է մոռանան գյուղկոմքջիջները, քջկոմներն ու զավկոմները՝ նաև կոլտնտեսության անդամ կոմունիստի կուսպարտականությունների քանակն ու վորակը սահմանելիս, մանավանդ ամսութամանակ։

Ծըջկոմներն ու գավկոմները կոլտնտեսության անդամ կոմունիստների նկատմամբ չպետք է մոռանանակ մի այլ բան։ Նրանց չպետք եւ աշխատանքների փոխադրել (մանավանդ յեթե այդ փոխադրումը տպվ-

յալ ընկերոջ միանդամայն կտրում և կոլտնաեսությունից), առանց հաւշվի առնելու այն հանդամանքը, թե ինչպիսի նշանակություն ունի փոխագրվող կոմունիտար կոլեկտիվ տնտեսության համար: Յեթե նույնի գրված կոլտնաեսության կազմակերպիչներից և ձեռնորդներ ընկերներից մեկն և, ապա լույս և նրան բոլորին վուշ մի տեղ չփոխագրել և հնարավորթյան չափ նրան քիչ գեղքերում կտրել կոլտնաեսությունից՝ այնպիսի գործազգման կոմ կոսովարատկանություններ կատարելու համար, վորոնք կտպված են կորանաեսությունից յերկոր ժամանակով կտրված լինելու հետ:

Յեթե կոմունիստը սիրով և նվիրվածորեն և կողեւ կորանաշարժման, նրան ամենինին չի կարելի մեղադրել այն բանում, վոր չնորհիվ այդ հիմնական աշխատանքի, նրան չատ քիչ ժամանակ և մնում բնորդանուր էլուսաշխատանքները կատարելու համար: Վնասակար և անդամ հանցազործության և նման կոմունիստաներին կտրել կոլտնաշարժումից:

Կոլտնաշարժման ուժեղացումը, վորն առաջնաշար միջակ և չքավոր գյուղացիական ամենալայն մասսաներ և ընդգրկում, և գրա հետ միասին կոլեկտիվացման հարցի շուրջը գյուղում առաջացած պայքարի սրումը կոմկուսակցություն խնդիր և առաջադրում միջոցների գիմելու, վորպեսզի գյուղի կոմունիստներն ամբողջապես մասնակցեն կոլտնաեսություն կոլտնաեսություն կամ, ամենավատ գեղքում՝ վորեւ պարզ արտադրական միության աշխատանքներին, ողետք և հատուկ քննության առարկա դառնա թղթում, վորը պետք և բոլոր միջոցները ձեռք առնի համոզելու իր անդամին, իսկ անհրաժեշտության գեղքում՝ նաև նրա ընտանիքին՝ մասնելու կոլտնաեսության մեջ: Ասկայն ինչպես այդ, նույնպես մյուս բոլոր գործերում

անթու յլտոտրելի յե ձեական վերաբերմունք ունենալ
դեպի մարգը։ Անհրաժեշտ և հաշվի առնել վոչ միայն
կոմունիստին այդ գործում հարկադրելու հնարավո-
րությունն ու գործնական նպատակահարմարությունը,
այլև գործի հասարակական ու քաղաքական կողմը։

Յեթև կոմունիստ գյուղացին կարսպացել և իր տն-
հասական աշխատավորական անսեսությունը զնել
այսպես, վորն որինակ ծառայի, թե ինչ միջոցով և
ինչի կարելի յե հասնել անձնական համաս աշխատն-
քով՝ տոանց դիմելու որիշի աշխատանքի շահագործ-
ման, իսկ կոլտնտեսություն մանելին ինչ-ինչ պատճո-
ռով դժվար և նրան, ապա նման կոմունիստը նույնքան
զնահատելի և հարկամար և կուսակցության, վորքան
սիրով և վողերությամբ կոլտնտեսություն կառուցող
կոմունիստը։

Ինչպես իրագործել կոլտնտեսությունների կուսպե-
կավարությունը, յերբ այդ կոլտնտեսությունով չկան
իրավունիստներ և կոմյերիտականներ, վորոնց միջոցով
կարելի լինեն հաղորդել կուսակցության իրահանգները։

Նման գեղքերում գյուղական կազմակերպությունները
գործադրում են իրենց վորեւ անդամին կոլտնտե-
սության ամրացնելու միջոցը։ Իրավաբանորեն նման
ամրացումը կարող և հանդիպել հետեւալ առարկու-
թյուն։ «Չի կարելի մասնավոր կազմակերպություն
գործուղղել նրա համար կողմնակի մարդու, այն եւ այն
նպատակով, վոր նա միջամտի կոլտնտեսության գոր-
ծերին»։ Յեթև գործողված ընկերն իր ամրացման
գոտուին մոտենա ձեականորեն, յեթև նա չձգափ կոյ-
տնտեսության գործնական աջակցություն ցույց տալով
դեպի իրեն հարզանք և ընկերական վերաբերմունք
ձևոք բերելու, այն ժամանակ, իհարկե, վերեւում առ-
ված իրավաբանական տուարկությունը միանդամայն
ձիւս կլինի։ Իսկ յեթև կոլտնտեսության ամրացման
ընկերը իր ուժերի և կարսպության սահմաններում

ոգնի կոլտնտեսության, այն գեղքում նրա համար ուղահովված կլինի կոլտնտեսության անդամների ընկերական վերաբերմունքը և վոչ վոք ել չի մտածի իրավաբանորեն հիմնավորել նման վերաբերմունքը:

Ամենից լավ ե կոլտնտեսության դրաւթյան մատիճ գեկուցումները լսել բջիջի դուրաց նիստերում, ուր պիտի ե մասնակցեն անկուսակցական գյուղացիներն ու գյուղատնտեսը: Կոլտնտեսության աշխատանքների և գրության մասին բջիջի բանաձեռքը չղետք և սահմանափակվեն միայն մատնացույց աներով՝ թե ինչ պետք ե անել, այլև անհրաժեշտ և մատնանշել նաև այն, թե ինչպես պետք ե անել և ով պետք ե անի:

4. ԻՆՉՈՒ ՅԵՎ, ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կոլեկտիվացման համար խելացի ագիտացիան և կոլտնտշինարարության ճիշտ զեկավարությունը՝ Համկոմկուսի գյուղական կազմակերպությունների համար չափազանց կարեւոր խնդիրներ են: Իսկ ամենից կարեւոր խնդիրը պիտի համարել այդ շինարարության գործնական սգնություն ցույց տալը, այլ կերպ ասած, այդ շինարարության մասնակցել վոչ միայն խոսքերով, այլև գործնականում:

Կոլտնտշինարարության ասպարիզում գյուղական կոմունիստների գործոն մասնակցությունն անհրաժեշտ և վոչ միայն նրա համար, վոր ընդհանուր առմամբ կոմունիստը չի կարող գործնականում մասնակից չինել սոցիալիզմի կառուցման:—Համկոմկուսի գյուղական կազմակերպությունների և առանձին կոմունիստների գործնական մասնակցությունը կոլտնտշինարարության անհրաժեշտ է, վորպես կոլտնտեսությունների քանակական աճման և վորակական բարելավման անհրաժեշտ պայմանը:

Համկոմկուսի գյուղական կազմակերպությունների-

զործնական սպնությունը կոլտնաշարժման պետք և
ուղղված լինի զիսավորապես պայքարելու այդ շարժ-
ման բացասական կողմերի, ուրիշ խոսքով ասած, — այն
բոլորի գեմ, վորոնք խանդարում են այդ շինարարու-
թյան:

Հոկտեմբերյան հեղափոխության հետեանքով կոր-
անաշինարարությունը սահցավ իր զարգացման և աճ-
ման բոլոր հիմնական նախադրյալները: Բայց գրա հետ
միասին, այդ շինարարությունը զգալիորեն գժվարաց-
ված և այն, թեկուղ յերկրորդական նշանակություն
ունեցող բացասական հանգամանքներով, վորոնք Հոկ-
տեմբերյան հեղափոխությունը չկարողացավ հիմնակո-
նորեն վերացնել այսպես, ինչպես որինակ, պամեչչի-
կական հողատիրությունը: Այդ բացասական հանգա-
մանքներից ամենակարևորները հետեւյալներն են: —

Ցարական-բուրժուական թուսաստանից ժառանգու-
թյուն մնացած գյուղի հետամնացությունը. այդ հե-
տամնացության արդյունքն է, որ մարդիկ գերազա-
սում են մնալ քաղցած փորով անհատական սեփականա-
տերեր, քան մասնել կոլտնուեսության մեջ և կշտանալ:
Այդ նույն տգիսությունն արգելվ է հանդիսանում ան-
դամ այն ժամանակ, յերբ մարդիկ արգեն հրաժարված
են լինում սեփականատիրության գաղափարից, բայց
չեն իմանում, թե ինչպես կոլտնուեսություններ կադ-
մակերպեն, իսկ կազմակերպածներն ել չգիտեն և չեն
կարողանում ոգտվել նրանց արգած իրավունքներից և
արտոնություններից:

Կոլեկտիվ տնտեսությունների շինարարությունն
ընթանում է գյուղի գասակարգային շերտավորման,
գյուղի վերին ու ներքին խավերի և կուլակների ու չքա-
վորների միջև տեղի ունեցող պայքարի պայմաններում:
Վերին խավերի կողմից ներքին խավերին ճնշելու տըն-
տեսական հնարավորությունները և նրանց իրավունք-
ների սահմանափակումը հարկադրում և կուլակներին

մի շարք խորամանկությունների և միջոցների դիմել։ Զանազան խայտառակ զբարսություններ տարածելու միջոցով նրանք իրենց զասակարգային առելությունն են արտօհայտում կոլտնտեսությունների նկատմամբ և ավելի ուժեղացնում զյուղի ընդհանուր հետամնացության բացասական ազգեցությանը։ Սակայն զբա հետմիասի, կոլտնտեսությունը վորպես կազմակերպչական ձեւ, կուլտակների կողմից շատ հաճախ և մտածված կերպով գործադրվում է չքափորության տնտեսապես շահագործելու փաստն իրավաբանորեն ծածկելու և կոլտնտեսության վերապահված զանազան արտոնություններից ոպավելու նպատակով։

Կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ջանքերն ուղղված են վերացնելու գյուղում սոցիալիզմի կառուցման վերոհիշյալ բացասական հանդամանքները։ Այդ պատճառով մենք այսոել գյուղական կազմակերպություններին վոչ մի առանձին միջոցներ չենք առաջարկում, որինակ, անկուլտառականության դեմ պայքարելու։ Ճիշտ նույնպես, ինչպես վոչ մի առանձին միջոց չենք առաջարկում կուլտակների զեմ պայքարելու։ Կոլտնտշինաբարության բնագավառում գործնական կուսաշխատանքների ուժեղացումը բնավ չի պահանջում վերանայել կամ փոփոխել գյուղում կուսակցական աշխատանքների ընդհանուր ձևերն ու խնդիրները։ Յերենելով գյուղի կուսաշխատանքների այդ ընդհանուր ձևերից ու խնդիրներից, և առանձնապես Համկոմկուսի **XV** համագումարի առաջադրած խնդիրներից, գյուղական կուսակցմակերպությունները պետք ե նշեն կոլտնտեսությունների շարժման բնագավառում իրենց աշխատանքների գործնական խնդիրները։

Համկոմկուսի **XV** համագումարը պարզորոշ և կրորուկ կերպով առաջադրեց այն խնդիրը, վոր գյուղի կուլտ-կրթական, կազմակերպչական և տնտեսական ամբողջ աշխատանքները պետք ե մի նպատակ հետա-

պընդեն, —այն ե՞ գյուղն առաջ շտրժել կողեկտիվաց-
ման ուղիղով։ Այդ հիմնական խնդրից յենելով ել պետք
է գնահատվեն գյուղական կազմակերպությունների և
գյուղական առանձին կոմունիստների, աշխատանքները։
Թե գյուղական չքավորության վարկավորման ու չքա-
վորական ֆոնդի ողագործման, կամ թե գյուղական
ազգոնոմի աշխատանքների ղեկավարման հարցում, —
ամենուրեք և ամեն աեղ այդ աշխատանքների ուղեցույց
աստղը պետք է հանդիսանա գյուղացիական անեսու-
թյունների կոլեկտիվացումը և արտադրական կոոպե-
րացումը։ Յեթե, որինակի համար, հնարավորություն
կա յերկարատե վարկով գնվելիք մեքենաների շուրջը
կազմակերպել հողը համայնքեն ողագործման միու-
թյուններ կամ մեքենաուղագործական ընկերություն-
ներ, ապա այդ վարկերը չպետք է ցրվել անհատ չքավոր
տնտեսությունների միջև, ուր դրանք յենթակա յեն ան-
տեղի ծախսվելու կամ կուլակների կողմից չքավորու-
թյան շահագործելու նպատակով ողագործվելու
ռիսկին։

Նույնը պետք է ասել նաև գյուղատնտեսի աշխա-
տանքների նկատմամբ։ Գյուղատնտեսը պետք է հանդի-
սանա կոլտնտեսությունների և արտադրական ընկերու-
թյունների ուղեցույցն ու կազմակերպիչը։ Բոլոր գյու-
ղատեսներն ել ընդունակ չեն այդպիսի ուղեցույց և
կաղմակերպիչներ լինելու, զըանցիցի շատերը կարիք
ունեն գաղափարական վերամշակման և ընկերական ո-
ժանդակության։ Այդ աեսակեացից շրջկոմների մինիմալ
խնդիրը պետք է լինի գյուղատնտեսներին համարա-
տասիսան գրականություն մատակարարելը։

Կոլտնտեսություններին ողնելու գործնական խըն-
դիրները, ինչպես և նրանց զեկավարելու կոնկրետ հար-
ցերը վորոշելիս, անհրաժեշտ յելակետ ունենալ այն,
վոր այդ ողնության պըոցեսի ընթացքում կոլտնտե-

սությունների բնակչությունը ստվորեր ինքն ուզնել .
իրեն:

Կողանտեսություններին ողնելու բնագավառում
Համկոմկուսի դյուցական կազմակերպությունների կա-
րեւրագույն խնդիրն ե՝ ոգնել նրանց կուլտակային հա-
րածանքներից և յուրաքանչյուր տառնձին կոլտնտեսու-
թյունում կուլտկների ճնշումից, ինչպես և պաշտպանել
զանազան հիմնարկներում անտարբեր վերաբերմունքից,
բյուրոկրատիզմից և վալակիտայից: Այս խնդիրները
իրականացնելու համար ամեննեին պարտադիր չե, զոր
րջիջները կամ չըջկոմներն իրենք իրենց միջոցներով և
ուժերով միջամտեն կուլտակային վերաբերմունքի, վա-
լակիտայի և բյուրոկրատիզմի բոլոր գեղքերին: Կոլ-
ուտնաեսության պաշտպանելու համար ամենից տառջ ան-
հրաժեշտ ե, զորպեսզի րջիջն ամբողջութին և տուանձին
կոմունիստները դիմեն բայոր միջոցներին կոլտնտեսու-
թյաններին իրավաբանորեն զիմելու համար, այսինքն,
զոր նրանք մանրամասորեն և խելացի կերպով տեղե-
կացվեն, թե խորհրդային որենքներն ինչպիսի իրա-
վունքներ ու պարտականություններ են տալիս նրանց և
ինչպես ովասիւլ տուաջիններից և կատարել յերկրորդը: Այս
զործում չի կարելի սահմանափակվել նրանով
միայն, զոր չըջանային խօճիթ-ընթերցարաններում
այդ որենքները պառկած լինեն սեղանների վրա: Ան-
հրաժեշտ և այդ որենքները մանրամասնորեն և լավ
պարզաբանել հենց կոլտնտեսությունում բոլոր անդամ-
ներին: Լավ կլինի հատկապես այդ զործի համար մի
յերեւու անզամ գնայ կոլտնտեսություն—առանձնապես
կորատեսությունների վերաբերյալ 1927 թ. մարտի
16-ի որենքը պարզաբանելու նպատակով:

Կոլտնտեսությունների իրավագիտական սպառազի-
նումը, ուժեղացնելով նրանց ինքնուրույնությունը՝
պայքարելու պետական և կոռպերատիվ ապարատների
վալակիտայի և բյուրոկրատիզմի դեմ,—ոգնում և կո-

սակացության պայքարել այդ ասպարատների լավացման համար։ Կոլտնտեսություններում, այսպես թե այնպես, կազմակերպվում են խորհրդայնութեն տրամադրված և պրոլետարիատին սոցիալապես գյուղի ավելի մոտիկ խավը, վորք պետք ե ամբողջովին սպասազործվի պետապարատի և ընդհանրապես բյուրոկրատիզմի և վարչական գործության պարզաբանման համար։ Իսկ զրա համար անհրաժեշտ է իրավադիտորեն զինել կոլտնտեսությունների շարժման ակտիվը և զեկավարել նրա պայքարը։

Անհրաժեշտ է նույնապես պայքարել կոլտնտեսությունների նկատմամբ ցույց տրվող այն ձեւական և անտարբեր վերաբերմունքի դեմ, վորսնց մասին ընկ. Լենինի խոռքերով կարելի յե ասել—«ձեւականորեն ճիշտ է, իսկ եականում—ծաղրանք»։

Սարատովի նահանգի մի խոչը կոլտնտեսության զեկավարները ցանկանալով ոգնել գյուղատնտեսական կոստներացիայի տեղական գավառային միության, այսպես ասած «մտերմական մուրհակ» են տալիս այդ միության, այսինքն, առանց միության պարտ լինելու մուրհակ են տալիս նրան։ Միությունը սնանկանում է, բուծարքի յե յենթարկվում, իսկ կոլտնտեսության ավտօնեած գումարի «մտերմական մուրհակը» հանձնվում է դանձման։ Հասկանալի յե, վոր այդ դանձումը կքայլ կոլտնտեսության։ Կարելի՞ յե արդյոք սառնուսիրն վերաբերվել այդպիսի քայլայման։ Չի՞ կարելի։ Չե՞ վոր տարիներով կոլտնտեսություն հիմնող տասնյակ մարդկանց չի կարելի փողոց նետել կոլեկտիվի զեկավարների հակառակին դուշտինական դուշտունեություն պատճառում։

«Մտերմական մուրհակ» տվաղները պետք ե յենթարկվեն դատի (թե կուսակցական, յեթե նրանք կուսակցականներ են, և թե խորհրդային), նրա համար վոր նրանք հանցագործ վերաբերմունքը յեն ցույց տվել կոլտնտեսության նկատմամբ՝ առանց նրա տիրոջ, այ-

սինքն՝ անգամների ընդհանուր ժողովի զիտության։ Իսկ ինչ վերաբերում է կոլանակության, ապա ամեն կերպ նա պետք է յետ կենա նման դեպքերում, և զրահամար պետք է տառջին հերթին միջնորդին համապատասխան բջիջներն ու շրջկոմները, դիմելով դատախաղության և Բանգյուղական ողնության։

Վերեւում ցույց տվինք, վոր անհրաժեշտ և հողաշինարարություն կատարել հենց կոլանակության հաղմակերպման միջոցին։ Դժբախտարար կոլանակության ամբողջնման և տնտեսական նախատակահարձարության այդ կարեւոր պայմանները միշտ ել չեն իրազործվում հողային մարմինների կողմից։ Այդ պատճառով 1927 թ. մարտի 16-ի որենքը կտրականորեն պահանջում և նրանցից հողաշինարարություն անցկացնել կոլանակություններում։

Համեկոմկուսի շրջկոմը կամ բջիջը, վորի շրջանում գոյություն ունեն հողաշինարության չյենքարկված կոլտնտեսություններ, —պետք է միջոցների դիմի կուսակցական գծով իրազործելու մարտի 16-ի որենքի համապատասխան ցուցմունքները։ Այդ որենքի պահանջները չկատարող հողային աշախտակից կոմունիստների հարցը պետք է զրվի Գավկամում։ Հասկանալի յե, վոր գտ պետք և անել, վոչ թե մեկն ու մեկին պատասխանապալության «կանչելու» նպատակով, այլ դրա նրապատակը պիտի ինի՝ պարզել որենքը չկատարելու պատճառները և վերացնել դրանք։

Եռյն կարգով ել պետք և ձգտել իրազործելու 1927 թ. մարտի 16-ի որենքի մյուս կետերը, վորոնք վերաբերում են հողային մարմինների, վարկային հիմնարկների և կոսպերատիվ միությունների գծով կոլանակություններին նյութական ողնություն և արտոնություններ տալուն։ Կարիք չկա այստեղ թվել այդ բոլոր հոգվածները, վորովհետեւ 1927 թ. մարտի 16-ի որենքը պետք է գյուղի կուսակցական և խորհրդային

մարմինների համար գործնական աշխատանքների ծրագիր լինի՝ կոլտնտեսությունների շարժման ընազավառում։

Այդ որենքի մեջ իր վճռական նշանակությամբ առանձնապես աչքի յի ընկույմ այն կետը, վորը մատնանշում և կոլտնտեսության մեքենայացման գործին ամեն կերպ ողնելու անհրաժեշտությունը, վորապես կոլտնտշարժման հերթական պարմանը։ Սա գրավականն և այն բանի, վոր կոլտնտշարժումը կընթանա սոցիալիզմի գծով, և չի լինի անհեռների հենարան, ինչպես նախահեղափոխական շրջանումն եր։

Կոլտնտեսությունների վարկավորման և մեքենամատակարարման վերաբերյալ հեշված որենքի կետերն իրազործելու նպատակով հիմնված են դրանց մեքենայացման և հիմնական կառուցումների համար յերկարանուն վարկավորման ֆոնզեր, ինչպես և մշակված են այդ ֆոնզերն սպառազործելու համապատասխան հրահանգներ ու կանոններ։ Դրույտական բջիջները և շրջկոմը պետք ե լրակ իմանան այդ հրահանգներն ու կանոնները, վորապեսզի իրենց հերթին կարողանան ցուցմունքներ անել կոլտնտեսության, թե իչողե՞ս, վո՞րտեղ և ի՞նչ կարգով պետք ե միջնորդել, որինակ, արակտոր զնելու համար վարկեր ստանալ։

Գյուղին տրակտորներ բաժանելու նախորդ տարիների փորձը ցույց տվեց, վոր զրահեանքով ամենից շատ են կեղծ-կոլտնտեսություններ ծնունդ առնում, և վոր բազմաթիվ գեղքեր են յեղել, յերբ կոլտնտեսությունների կողմից տրակտորների համար յեղած պահանջները չեն բավարարվել, իսկ տրակտորն ընկել և ունեոր գյուղացու ձեռքը և նա կեղծ-կոլտնտեսության նման տրակտորն սպառազործել և չքավորներին շահագործելու նպատակով։

Անհրաժեշտ և միանգամայն և ընդմիշտ վերացնել մի շարք վայրերում նկատված բջիջների այդ անտար-

բեր վերարերմունքը։ Զպեաք և մոռանալ, վոր այստեղ հարցը վերարերում և վոչ միայն կոլտնտեսություններին ոգնելու դործի, այլ և դյուզի մեր քաղաքականության հիմքերից մեկի տապարման։

Կոլտնտեսություններին դյուզատնտեսական ոգնության ցույց տալու դործում այնքան ել մեծ հանցանք չի լինի, յեթե այդ պնտթյունը ցույց տալիս առավելություն արվի նրանց՝ հանդեպ դյուզացիական անհատական տնտեսությունների։ Զե՞ վոր դյուզատընտեսորեն լավ և որինակելի գրված կոլեկտիվ տնտեսություններ հենց յուրահատուկ ազրոնամիտական կայան և հանդիսանում շրջանի բնակչության համար։

Կոլտնտեսության կուլտուրական կապը շրջանի բրնձական հետ և նրանց վրա կուլտուրական ազգեցություն տնենալը, — սրանք կոլտնտշարժման այնպիսի խնդիրներ են, փորոնց կենսագործումը հնարավոր և միայն այն գեղքում, յերբ տեղական կուսակցական մարմինները տմեն կերպ աջակցեն կոլտնտեսության։ Վերցնենք մի այսպիսի որինակ. — մեծ կորանտեսությունները հաճախ իրենց հաշվավ զպրոցներ, ընթերցարուններ և մուտքներ են կառուցում իրենց համար։ Նման գեղքերում Հոգդողկոմմատի և Լուսժողկոմմատի տեղական մարմինների նյութական մասնակցությունը կուտնտեսություն այդ ձեռնարկումներին հնարավորություն կտա նրանց ձեռնարկումներին իրավուրծել ավելի ընդարձակ ծավալով, քան անհնարինաց և միայն ավյալ կոլտնտեսության կարիքները բավարարելու համար։ Այսպիսով դյուզի կուլտուրական հիմնարկությունների ցանցի ընդարձակման հիման վրա կուլտուրական կտա և ստեղծվում կոլտնտեսության և շրջանի բնակչության միջև։

Եռւյնը կարելի յե ասել նաև Հողժողկոմմատի և Կոռպագերատիվ կազմակերպությունների կողմից կոլտնտեսության ազրոկուլտուր ձեռնարկումներին նյութակա-

նապես մասնակցելու առթիվ։ Սակայն այդ հարցերին գործնկան լուծում տալու միջոցին պետք է հիշել, վոր կոլտնտեսությունների կամքից և կախված մասնակցելու, այդ կոլտության ձեռնարկումներին։

Վերեւում մենք արդեն ասացինք, վոր կոլտնտեսություններում կազմակերպվում են ավելի խորհրդայնութեն տրամադրված և ավելի ակտիվ ու գիտակից չքավորամիջակային մասսաները։ Համկոմկուսի գյուղական բջիջները և չքավումները պետք է համապատասխան կազմակերպչական յեղբակացություններ հանեն այդ գրությունից, այսինքն՝ իրենց գործնական խնդիրներից մեկը համարեն կոլտնտեսության ակտիվի լավագույն ներկայացուցիչներին առաջ քաշելու շրջանային և գումարային խորհուրդների համագումարների ու կոոպերատիվ կազմակերպությունների լիազորական ժողովների ընտրովի պաշտոններում, ինչպես և համաձայն Համկոմկուսի 1928 թ. նոյեմբերյան պլենումի հրահանդի, այդ ակտիվի լավագույն ներկայացուցիչներին ներգրավելու կուսակցության շարքերը։

Հասկանալի յե, վոր կոլտնտեսություններին գործնական ողնություն ցույց տալու բոլոր հնարասավորությունները չի կարելի նախատեսել որենքով կամ կանխանչել լրագրերի հոգվածներում և գրքերում։ Գյուղական խորհրդային մարմինների և կուսակցական կողմանիներությունների կողմից կոլտնտեսություններին լայն ու շարունակարար ողնություն ցույց տալու կարեռագույն պայմանը պետք է լինի նրանց ստեղծագործական նախաձեռնությունը, վորը հիմնված է լինելու կոլեկտիվի տնտեսության և նրա կարիքների խորին ու մանրամասն ծանոթության վրա, ներառյալ նաև անդամների արամագրությունը, նրանց միջև յեղած փոխհարարերությունն՝ յուրաքանչյուր տվյալ մոմենտում։

Կոլտնտեսության գրության հետ այդպիսի ծանո-

թությունը րջիցներին և շրջկոմներին անհրաժեշտ ենք համար, վորպեսզի յուրաքանչյուր բռվել կարելի լինի խմանալ, թե ինչում, ինչպես ոզնել և ինչ հարցերում լով և բոլորովին չմիջամտել:

Նպատակահարմար և բոլորովին չմիջամտել այնպիսի գործերում, ինչպիսին են՝ կոլտնտեսության ներսում աշխատանքի բաժանումը, շահի բաշխումը և մի շարք անտեսական հարցեր, վորոնց ճիշտ և նորատակահարմար լուծումը հնարավոր և վոչ միայն մի կամ տասնյակ, այլ հարյուրավոր կոլտնտեսությունների փորձի և պրակտիկայի հաշվառման հիման վրա:

Աղնել կոլտնտեսություններին համախմբելու և քննության յենթարկելու կորանտշարժման այդ փորձը, —սա Համկամկուսի գյուղական կողմակերպությունների կարեսրադույն և դրա հետ միասին նրանց ուժերին համապատասխան ու հեշտ կիրառելի խնդիրներից մեկն է:

«Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոգվածում Վ. Ի. Լենինը գրում է. — «Մամուլը պետք է ասցիսալիստական շինարարության դենք հանդիսանա, — ծանոթանալով որինակելի կոմունաների բոլոր մանրամասնություններին՝ նրանց նվաճումներին, ուսումնասիրելով՝ նրանց հաջողությունների պատճառը, նրանց անտեսության ձևերը, մյուս կողմից «ուև տախոսակին» գրելով այն կոմունաներին, վորոնք համառ կերպով պահում են կապիսալիզմի տրաղիցիաները, այսինքն՝ անարխիա, ձրիակերություն, ծուլություն, անկարգություն և սպեկուլացիա»:

Այդ խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ են են ամեն կերպ ոզնել ստեղծելու կոլտնտշարժման հատուկ թղթակիցներ — «Կոլթղթակիցներ»: Պետք է առաջարկել կոլտնտեսության ավելի գրագետ անդամներին՝ գրել իրենց կազմակերպության կյանքից, անփորձ թղթակիցներին սովորեցնել հոգվածներ գրելու ձեերն

ու աեխնիկան և ամեն կերպ առաջ քաշել ու խրախուսել նրանց, ովքեր յուրացըել են այդ ձեւը և քաղաքականագես ճիշտ են ըմբոնել իրենց խնդիրները: Կոլթղթակիցը զլխավորապես պետք է ընդգծի կոլեկտիվի ալնտեսական նվաճումների բայոր ուսանելի կողմերը, նրանց թերություններն ու սիսալները: Հասկանալի յէ, վոր կոլթղթակիցի աշխատանքների մեջ կեղծ—կորածնտեսություններում հասարակական ինքնագործունեալթյան թերությունը չպետք է հետին շարժում մնան:

Գյուղթղթակիցների ընդհանուրը շարժման պես, կոլթղթակիցների աշխատանքները չպետք և սահմանափակվեն միայն մանր-մունք բաներ գրելով: Կոլթղթակիցը, ինչպես և գյուղթղթակիցը պետք և յինի այն լրագրի կամ ամսագրի կազմակերպիչը, վորին նա թրղթակցում է, և առաջին հերթին ընթերցողներ ու բաժանորդներ հավաքի «Կոլեկտիվիստ» ամսագրին, վորը հրատարակում է Կորանտեսությունների Համամիութեական Խորհուրդը:

Զպիտի մոռանալ, վոր կորանտեսությունների շինարարության փորձի հաշվառումը, քննումը և համախմբումը անհրաժեշտ և վոչ միայն նրա համար, վոր կորանտեսությունները լավ կազմակերպվեն իրենց ներսում, այլև նրա համար, վորպեսզի Համկոմկուր հանձինս յուր համագումարների, կոնֆերանսների ու կենտրոնական Կոմիտեյի ամեն բոլց աեղյակ լինեն ընդհանուր առամամբ կորանտշարժման դրության, ուղղության, թերություններին, կարիքներին և նվաճումներին:

Կոմիտասակցությունն անսխալ կերպով զեկավարում է ժողովրդական անտեսության սոցիալիստական շնարարությունը և պետության, վորովհետեւ նրա կենտրոնական մարմինները աեղական կազմակերպությունների միջոցով անընդհատ աեղեկացնում են ժո-

զովրդական անտեսության առանձին ճյուղերի գրության, թերությունների, նվաճումների ու կարիքների, ինչպես և գյուղացիության ու պրոլետարիատի տրամադրությունների և կարիքների մասին:

Կոստակցական կենտրոններին տեղյակ պահելու այլ խնդիրը գյուղական կազմակերպությունները պետք է կոլանաչարժման նկատմամբ կիրառեն հատուկ ուշադրությամբ ու մանրամասնորեն, վոչ մի բոպե չմոռանալով, վոր կոլանակությունները կարող են լինել չքավորության ողնության ամենալավ միջոցը, յեթե Համկամկուսար և խորհրդային պետությունը ճիշտ գիծ տանեն նրանց նկատմամբ։ Իսկ այդ գծի ճշտությունը, իրեն հերթին պայմանագրոված և կոլանաչարժման ժաման կենտրոնները լրիվ, ճիշտ և ժամանակին տեղեկություններ ունենարով։

5. ԵՆՉ Ե ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԵՏԵԽՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր կուսկազմակերպության յուրաքանչյուր խնդիրն իրազործելու հաջողությունն ապահովվում է .—առաջին, յեթե պարզորեն պատկերացվում է այդ խնդիրի եռթյունը և նշանակությունը, յերկրորդ, յեթե ուշադրությամբ և խնամքով հաշվի յետ առնվազա այդ խնդիրի իրազործման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների քանակին ու վորակը, ինչպես և բոլոր զրժվարություններն ու արդելքները, յերբորդ, յեթե զործնականապես իրազործվում է այն բոլորը, թե յերր, վորքան և ինչ և հարկավոր անել, ով և ինչպիսի վործպիտի անի, ում հանդեպ և յերբ պետք է հաշվետու լինի այդ հանձնարարությունների կատարման համար։

Կոլեկտիվացման աշխատանքների համար ինամքով, լավ և պարզ կերպով կազմված ծրագիրը հանդիսանում է գյուղական բջիջների և շրջկոմների կողմից

այդ բնագավառում տարվող աշխատանքների հաջողության ամենաեական տարրանը:

Կորոնաշինաբարության զործում գյուղական բջիջների աշխատանքների հաջողությունը կախված է բջիջի վորակից բնդիանուր առումով և նրա առանձին անդամների վարքից՝ ավելի մեծ չափով, քան բջիջի վորեւ աշխատանքի հաջողությունը։ Աւրիշ խոսքով, կախված է նրանից, թե ըջիջը ինչպիսի վստահություն և հարգանք ունի գյուղի չքավորումիջակային մասսայի մեջ։ Այդու հանդերձ պետք է նկատի ունենալ, վորունեարների և կուրակների հարգանքը գեափի բջիջը վկայում են այդյալ բջիջի քաղաքական վատ վորակի մասին, վորովհետեւ, ինչպես յերեսում և այդ բջիջը ի վնաս չքավորության գասակարգային շահերի կամ ի վնաս խորհրդային իշխանության շահերի հարմարվում և կուրակներին։ Նման գեափերում բջիջին հարկավոր և պարզել, թե իր անդամներից կամ թեկնածուներից վոր մեկը և ինչպիսի գործի համար և արժանացել բջիջին անվայնել նման մի վերաբերմունքի՝ կուսակցության համար ստար մարդկանց և գասակարգային թշնամիների կողմից։ Այլ խոսքով, նման գեափերում բջիջը պետք է զավի, առանց սպասելու, վոր վերսառուգիչ հանձնաժողովը համապատասխան միջոցներ ձեռնարկի այդ առթիվ։

«Բանվորներին ներդրավելու և կուսակցության աճումն կանոնավորելու» առթիվ կենտկոմի նոյնմթերյան պլենումի բանաձեռում մատնանշվում է, վոր գյուղական կազմակերպությունների շարքերում գոյություն ունելու վորոշ գեափերում՝ նշանակալից քանակությամբ ունելոր գյուղացիներ, յերբեմն ել՝ կուրակների հետ մոտիկացած, քայլայլած և բանվոր գասակարգին միանգամայն ստար տարբեր»։

Կարո՞ղ ե, կամ ավելի ճիշտ՝ կցանկանա՞ արդյոք ունեոր միայնակ գյուղացին, վորն արդեն մոտիկացել

և կուլակի հետ, կամ քայլայված հարբեցողը, կուստոմը գրպանում գյուղական չինովնիկն ակտիվորեն և նվիրված կերպով մասնակցել կորանաեսությունների շինարարության գործին։ Ճիշտ և, նման, թույլ տվեք առելու, «կոմունիստները» յերեմն միայն լեզվով խոսում են կոլեկտիվացման անհրաժեշտության և ոգտակարության մասին, բայց իրենք կորանաեսություն չն մտնում, պատճառաբանելով զանազան բաներ, թե բնափառ չի ակում և այլն։ Մի շարք դեպքերում կորանաշինարարության գործում նման «կոմունիստների» ակտիվաթյունը միանդամայն վնասարիք է, յերբ նըրանք իրենց անձնական ոգտի համար կեզծ-կորանաեսություն են կաղմակերպում։

Հասկանալի յէ, վոր կոլեկտիվացման ոգտին նման «կոմունիստների» ագիտացիան չքավորության կողմից ծաղրելի վերաբերմունք և ստեղծում դեպի կուսակցությունը, իսկ յերեմն զայրաւոյթ և առաջացնում, յեթե այդ ագիտատորն իր անսեսության մեջ շահագործում և նույն այդ չքավորի վարձու աշխատանքը։

Այսպիսով ահսնում ենք, վոր կուսակցության ստար և վնասարիք տարբերից Համկոմկուսի գյուղական կազմակերպությունների զուումը հանդիսանալու յի դյուզկոմբջիջների աշխատանքների հաջողության կարենորագույն պայմանը՝ կորոնաշինարարության գործում։

Սակայն զառմը քիչ է։ Համկոմկուսի կենտկոմի նոյնմբերյան Պյենումը մասնանշում է, վոր անհրաժեշտ և դյուղական կազմակերպությունների մեջ ներդրվածքել կորանաեսության անդամ, հասարակական աշխատանքներում փորձված չքավորների ու բատրակների լույսությն ներկայացուցիչներին և բանվորներին։

Համկոմկուսի դյուղական կազմակերպությունների շարքերի այդ թարմացումը նրանց ավելի մոտիկ կկանգնեցնի կուսակցության արտադրական աշխատանքներին

գյուղում, մասնավորապես՝ կոլտնտչինարարության խնդիրներին ու կարիքներին։ Գյուղական կազմակերպությունների շարքերում յեղած ակտիվիտաները, բառքարարները և կոլտնտեսության անդամները մշտական և խիստ հսկիչներ են յինելու կոմունիստների, միջակների և խորհրդային պաշտոնյաների վարքի նկատմամբ, և գրականությն կազզեն բջիջի աշխատանքների ուղղության վրա։

Գյուղական կազմակերպությունների 1928 թ. մասսայական ստուգումը ցույց տվեց, վոր բառբակների և կոլտնտեսությունների միջն աշխատանքների բացակայությունը՝ վորպես կանոն նկատմամբ և այնունզ, ուր բջիջները զեկավարում են միջակ և ունեոր կոմունիստները, կամ մասսայից կորպած գյուղական ու շրջանային պաշտոնյաները։

Կոլտնտեսություններին մասնակցելու կոմունիստների անձնական որինակը, — գա կոլտնտչինարարության բնագավառում գյուղական կազմակերպությունների աշխատանքների հաջողության գրավականն է։ Սակայն կոլտնտեսություններում գյուղական կոմունիստների մասնակցությունը չափազանց աննշան է։ Այս մասին վիճայում են 1928 թ. մի քանի կազմակերպություններում կատարված գյուղական բջիջների ստուգման արդյունքները։ Այդ պատճառով ներկայումս գյուղական կազմակերպությունների առաջ խնդիր և գրվում ավելի մեծ քանակության գյուղական կոմունիստներ ներգրավել կոլտնտեսություններում, առաջին հերթին աշխատավոր գյուղացիներից։

Վարպետների կոլեկտիվացման գործում չինել դատարկախոսներ և գրանով չկրգուել ու ծիծաղ չառաջացնել գյուղացիական մասսաների մեջ։ Վորպետների գործնականում զեկավարել կոլտնտեսության, կամ սոսկական մասնակցություն ունենալ նրանում և ապացուցել կոլտնտեսության իրական ոգտակարությունը, —

յուրաքանչյուր զյուղական կոմունիստ-ակտիվիստը պետք է զյուղատնտեսական ու գիտական վորոշ պատրաստականության ոնենա, և շնորհել գրա՝ հանդիսանալու շրջանային կամ կոլտնտեսության գյուղատնտեսի ուրակարիկ ողնականը:

Ըսկե Մտալինը 1928 թ. Համ. Լենկոմյերիտմիության VIII համագումարում մատնանշելով խոչըն հոգակ ործական տնտեսությաններ կազմակերպելու խիստ անհրաժեշտությունը, առաց. — «Լորպեղի կազմակերպելու խոչըն անտեսությունն, հարկավոր ե գյուղատնտեսական գիտություն իմանալ, խոկ իմանալու համար հարկավոր և սովորել: Մեզ մոտ չափազանց քիչ կան գյուղատնտեսական գիտություն ունեցող մարդիկ: Այսուեղից խնդիր ե առաջադրվում՝ ստեղծել նոր հաստրակական գյուղական տնտեսության կառուցողների նոր յերիտասարդ կազրեր»:

Հյուսիսային Կովկասի Յերկրային Կոմիտեյի գեկուցման ասթիվ Համկոմկուսի Կենտակոմի նոյեմբերյան պլենումի բանաձեռում մատնանշվամ և, վոր անհրաժեշտ և հասուկ գյուղատնտեսական կուրսեր, խմբակներ և այլն կազմակերպելու միջոցով բարձրացնել գյուղ. կուսկովզմակերպությունների գյուղատնտեսական գիտելիքների մակարդակը:

Գյուղատնտեսության տեխնիկական ռացիոնալացման և սոցիալիստական վերակառուցման գործը գյուղական կոմունիստների առաջ կարուել կերպով գնում և նրանց մասնագիտականորեն պատրաստվելու հարցն՝ այդ գործը զեկավարելու համար: Կամ Համկոմկուսի գյուղական կազմակերպությունները պետք ե զեկավարեն այդ գործը, — այն ժամանակ պետք ե հետեւել արտադրական, բանվորական բջիջների որինակին, կամ ել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը անկուսակցական մասնագետների ձեռքում մնալով, պետք ե շարունակարար «կաղա աջ վոտ-

քով» , ձգտի դեպ մանր-բուրժուական կարգեր և անփույթ վերաբերմունքի կոլեկտիվացման նկատմամբ :

Կոլտնաշխնարարության գործի քննադատությունը և ինքնաշխնադատությունը, զբա գործնական իրականացումը, ճիշտ այնպես, ինչպես և կոմկուսակցության մյուս բոլոր խնդիրներում, —հանդիսանում ե գործի հաջողականության կարևորագույն գրավականը :

Յեթե բատրակների, չքավորների և միջակ գյուղացիության լայն մասսաները քննադատում են կոլտրնտշխնարարության բնագավառում բջիջի տարած աշխատանքները, —դա նախ և առաջ նշանակում ե, վոր նրանք հետաքրքրվում են այդ շխնարարությամբ, մասածում են այդ մասին, հետևապես ընդառաջ են գնում կոլեկտիվացման, վոչ թե հեռու յեն փախչում, —ինչպես թրվում ե քննադատող բյուրոկրատներին :

Պետք ե ամեն կերպ վորոնել այդ քննադատության, վոչ թե վախենալ և թագնվել գրանից :

Իսկ ամենից կարեռը, վորն ապահովում ե կոլտնաշխնարարության բնագավառում գյուղական կազմակերպությունների աշխատանքների հաջողությունը, դա հունառ ու յեռանդուն պայքարն ե ազ թե՛ման դեմ, վորը գյուղական բջիջներում հաճախ արտահայտվում ե «գեղի կոլտնասեռությունները և խորհրդային տնտեսություններն անփույթ կամ բացասական վերաբերմունքով, գասակարգային պայքարի, մասնավորապես կուլտուրի դեմ պայքարի թերագնահատումով և մեղմացումով»*) :

Համկոմկուսի գյուղական կազմակերպություններում առանձին կոմունիստների աջ թեքումը՝ նրանց գործնական աշխատանքների ընթացքում հաճախ ար-

*) Տես 1928թ. նոյեմբերյան պլենումի բանաձեռ՝ ժողովը դական անտեսության 1928—29թ. կոնսորի թվերի մասին :

տահայտվում ե կուսակցության գծի աղճատումով, կուրսի խնամակալությամբ և չքավորին ու միջակին սեղմելով։ Այսպիսով դյուզական կազմակերպությանների աջ թեքման դեմ պայքարը վոչ միայն գաղափարական, այսինքն քաղաքական անդրագիտության, այլև կուսակցության շարքերը զանցու պայքար ե, վորը տարվելու յե՛ իրենց գործնական աշխատանքներում պրոլետարիատի դյուզական չքավորության դասակարգային թշնամունքում կամ մոտիկացած կոմունիստներին անխնա կերպով արտաքսելու միջոցով։ Սակայն դյուզական կազմակերպությանների մեջ խիստ մեծ չափերի յե հասնում քաղաքական անդրագիտությունը, վորը հաձախ անդամ չքավորության գարձնում ե կուլտակին ոժանդակով։ Գուղափարական ազգեցություն ունենալու նման կոմունիստների վրա, վորոնք չնորհիվ իրենց քաղանդրագիտության տատանվում են դեպի աջ և գրանց ներդրագիլու կոլտնտեսությունների մեջ,—սա աջ թեքման դեմ պայքարելու կարեռուագույն խնդիրն ե։


Կոլեկտիվացման համար պայքարելու և կոլտնտեսություններին գործնական աջակցություն ցույց տալու առթիվ ներկա գրքույիսում բոլոր ասվածները վերաբերում են վոչ միայն Համկոմկուսի բջիջներին և շրջկոմներին, այլև ԼԿՑԵՄ համապատասխան կազմակերպություններին։

1928 թ. գարնանը և աշնանը Համամիութենական ԼԿՑԵՄ դյուզական կազմակերպությունները մի շարք վայրերում կոլեկտիվացման առթիվ կուսակցության հրահանդները կիրառեցին ավելի մեծ ակտիվությամբ, քան նույնիսկ Համկոմկուսի գյուղական բջիջները։

Սակայն կոմյերիտմիությունն ունի նաև իրեն հատուկ խնդիրները՝ կոլեկտիվացման նկատմամբ։ Գյուղական կոմյերիտականը վոչ միայն պետք ե ուժեղացնի իր աշխատանքները՝ դյուզատնտեսական դիտելիքներ

տարածելու, գյուղատնտեսական խմբակներ կազմակերպելու բնագվառում, այլև այդ աշխատանքներն առաջ տանի կողեկտիվացման և արտադրական կոռագերացման լոգունգների տակ:

Գյուղական կոմյերիտմիության համար ցավությունների և այն մեծահասակ կոմյերիտականների հարցը, վորոնք ինչ-ինչ պատճառով չեն անցել կուսակցության մեջ. այդ հարցը կարող է մասամբ լուծում ստանալ նրանց լավ կազմակերպված կոլտնտեսությունների մեջ մտցնելու կամ նորերը կազմակերպելու միջոցով։ Սա առանձնապես անհրաժեշտ է չքավոր տնտեսություններից յելած կոմյերիտականների նկատմամբ։ Նրանց կոմունաներին կամ արտելներին հանձնելով միանդամից լուծվում է յերկու ինդիք, այն ե՝ յերիտասարդիք արնետեսական ապահովագույն հետապա քաղաքական աշխատանքի խնդիրները։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003530